The deed done by the student wasn't good. (What the student did wasn't good.)	Ուսանողի արածը լաւ չէր։
The important book I bought cost a lot.	Իմ գնած կարեւոր գիրքը շատ արժէր։

These two important books I bought cost a lot.	Իմ գնած երկու կարեւոր գրքերը շատ արժեն:

Past participle 2 may be used as an adjective to describe a following noun. In this use it is not inflected for case or number. If the agent (person by whom the action is done) is expressed and is a noun, this noun precedes past participle 2 and is in the genitive case, thus: ուսանողի արած 'done by the student'. If the agent is a pronoun, it is expressed either by adding the possessive ending to the participle or by the possessive adjective, thus: գրածս գիրքը or իմ գրած գիրքը 'the book read by me'. When there are adjectives other than the past participle 2 modifying a noun, they are placed between the participle and the noun, as in the last two sentences.

Note that past participle 1 may not be used in any of the above constructions.

What are you doing?	Ինչո՞վ ես զբաղուած:
I'm asleep.	Քնած եմ:
I've already seen that city.	Այդ քաղաքն արդէն { տեսած եմ: տեսել եմ:
I've written a letter.	Ես մի նամակ եմ { գրած: գրել:

Past participle 2 may be used with the verb 'to be'. In this construction it may always replace past participle 1. The converse is not true, however, since past participle 2 may be used this way with certain verbs to express special meanings. Thus, the expression meaning 'he has fallen asleep' may be either քնել է or քնած է, but 'he is asleep' may be only քնած է.

19.2 Passive Verbs

That river is called Arax.	Այդ գետը կոչւում է Արաքս:
Where can I find a room for myself?	Ու՞ր կարող եմ սենեակ գտնել ինձ համար:
On which street are the restaurants found?	Ո՞ր փողոցի վրայ են գտնւում ճաշարանները:
A new book is being written.	Մի նոր գիրք է հիմա գրւում:

He moved the chair.	Նա աթոռը փոխադրեց:
He moved (from one place to another).	Նա փոխադրուեց:
Anush was put on for the first time in Yerevan.	Առաջին անգամ Անուշ-ը խաղացուել է Երեւանում:
The actor was introduced to everyone.	Դերասանը ծանօթացուեց բոլորին:
My clean shirts were put on my bed.	Իմ մաքուր շապիկները դրուեցին անկողնուս վրայ:

Most Armenian verbs that may take an object may form a new verb with passive meaning from one of the stems of the basic verb.

Class 1 Verbs

If the infinitive stem of the basic verb ends in a single consonant, then the suffix /v/ is added to make the infinitive stem of the passive verb. If the infinitive stem of the basic verb ends in two consonants the last of which is /r/, /ə/ is inserted between the two consonants and /v/ is added. If the infinitive stem of the basic verb ends in any other two consonants, then /əv/ is added to form the passive.

Basic Verb Infinitive			Passive Infinitive Stem		Passive Infinitive		
գրել	gərél	to write	գրու–	gərv-	գրուել	gərvél	to be written
փոխադրել	poxadrél	to move	փոխադրու–	poxadərv-	փոխադրուել	poxadərvél	to move
գտնել	gət'nel	to find	գտնու–	gət'nəv-	գտնուել	gət'nəvél	to be found
պատմել	p'at'mél	to tell	պատմու–	p'at'məv-	պատմուել	p'at'məvél	to be told

Class 2 Verbs

Active verbs of Class 2 form passive verbs in the same way, except that the passive suffix is regularly added to the preterite stem in order to form the passive infinitive stem.

Basic Verb Infinitive			Passive Infinitive Stem		Passive Infinitive		
հասկանալ	hask'anál	to understand	հասկացու–	hask'acv-	հասկացուել	hask'acvél	to be understood
խաղալ	xaqál	to play	խաղացու–	xaqacv-	խաղացուել	xaqacvél	to be played

Irregular Passives

A few verbs form passives in ways which do not conform to the rules given above:

Basic Verb Infinitive			Passive Infinitive Stem		Passive Infinitive		
տանել	t'anél	to take	տարու—	t'arv-	տարուել	t'arvél	to be taken
դնել	dənél	to put	դրու—	dərv-	դրուել	dərvél	to be put
տալ	t'al	to give	տրու—	t'ərv-	տրուել	t'ərvél	to be given
անել	anel	to do	անու—	anv-	անուել	anvél	to be done

Note that all passive verbs belong to Class 1.1, regardless of the class of the underlying active verb.

Most of the verbs formed this way have a passive meaning 'to be written, to be found, to be told'. Some have a reflexive meaning. Thus, փոխադրել /poxadrél/ means 'to move (something)', but փոխադրուել /poxadərvél/ means 'to move oneself' or 'to change one's residence'. Some have a reciprocal meaning: thus, տեսնել /t'esnél/ means 'to see' and տեսնուել /t'esnəvél/ means either 'to be seen' or 'to see each other'.

19.3 Adjectives ending in իք /ik/

So it really is something worthwhile seeing.	Դա իսկապէս որ տեսնելիք բան է։
Who will speak after what you are going to say?	Քո ասելիքից յետոյ, ո՞վ պիտի խօսի։
Give me a little of that food (of that thing to be eaten).	Այդ ուտելիքից մի քիչ տուր։
What I have to say is very long.	Ասելիքս շատ երկար է։
The road I am to take is long.	Գնալիք ճամբաս երկար է։

From the full infinitive of most verbs an adjective may be formed by adding the ending իք /ik/ to the full infinitive. This form may be used as an adjective to describe a following noun. Like other adjectives, it may be used as a noun with the full inflection for case, number and possession. The meaning is equivalent literally to '(something) to be seen, (something) to be done', etc. Its use as a noun and as an adjective is parallel to the similar use of the past participle.

Note, however, that when past participle 2 is used as an adjective, if the person involved in the action is expressed by a possessive ending, this ending is added to past participle 2. If, on the other hand, the /ik/ adjective is used and the person involved in the action is expressed by a possessive ending, this ending is added to the noun following the /ik/ adjective and not to the /ik/ adjective itself, thus:

The road I am to take is long.	Գնալիք ճամբաս երկար է:
The road I took is beautiful.	Գնացածս ճամբան գեղեցիկ է:

If the person is indicated by the possessive adjective, then the two expressions are similar:

The road I am to take is long.	Իմ գնալիք ճամբան երկար է:
The road I took is beautiful.	Իմ գնացած ճամբան գեղեցիկ է:

Note that the /ik/ adjective refers to an event to take place in the future, but past participle 2 refers to one that has taken place in the past.

19.4 "to have just (done something)"

I have just come from there.	Ճիշտ հիմա այնտեղից եմ գալիս:
He has just come from Yerevan.	Ճիշտ հիմա Երեւանից եկաւ:

The Armenian equivalent of English 'to have just' is expressed by ճիշտ հիմա with either the present progressive or the preterite of the verb.

19.5 կա /k'a/ 'there is'

There are all sorts of shops.	Ամէն տեսակի խանութներ կան:
There was a lot of noise and hubbub.	Շատ աղմուկ և ժխոր կար:

The verb կայ, կան /k'á/, /k'án/ 'there is, there are' has a past form կար, կային/k'ár/, /k'aín/ 'there was, there were' with the endings of the past optative on the stem կա /k'a/.

19.6 "likewise, as well as"

Likewise, all the shoemakers have their own separate bazaars.	Ինչպէս նաեւ բոլոր կօշկակարներն իրենց առանձին շուկաներն ունեն։
I like tea and coffee as well as milk.	Ես սիրում եմ սուրճ և թէյ, ինչպէս նաեւ կաթ (ինչպէս և կաթ)։

The Armenian expression ինչպէս նաեւ (or ինչպէս եւ) is sometimes the equivalent of the English 'as well as' and sometimes the equivalent of the English 'likewise'.

19.7 ահա /ahá/

Here he comes.	Ահա գալիս է։
This is what he said.	Ահա թէ ինչ ասաց։
Here's your book.	Ահա քո գիրքը։

The form ահա is used like the English 'here' in pointing out or handing something to someone. It is also used like 'this' in emphasizing a statement.

19.8 New Verbs

Classification of new verbs in this lesson is as follows:

Class 1.1

խանգարել	to disturb	քնել	to sleep	կոչուել	to be called
շարուել	to put in a row	պատմել	to relate, to tell	ներմուծել	to import
հաւաքուել	to be gathered, to come together	վաճառել	to sell	արտածել	to export

Class 2.2

վերջանալ	to end, to finish

C. Exercises

Variation Drills

1. Did you see __________? (past participle 2)
    - the book I bought
    - the book I wrote
    - the book I brought
    - the letter I received
    - the letter I sent
    - the letter I wrote

2. After __________, I understood everything. (past participle 2)
    - what you said
    - what you told (me)
    - what you wrote
    - what I saw
    - what I heard

3. The letters will be __________ at nine o'clock.
    - delivered
    - sent
    - brought
    - opened

4. These letters must be __________ before noon.
    - written
    - sent
    - signed

5. His clothes were __________.
    - put in a closet
    - placed on the bed
    - found in his room
    - being washed
    - being pressed
    - being repaired

6. __________ will be difficult.
    - what I have to teach
    - what I have to say
    - what I have to do
    - what I have to write

7. The clothes I have to __________ are my brother's.
    - wash
    - fix
    - iron
    - send

8. The medicine he is to __________ is dangerous.
    - take (use)
    - buy
    - deliver
    - prepare

9. We have _______ and _______, as well as _______.
    - American, European; Armenian (foods)
    - stamps, envelopes; paper, pens
    - peaches, grapes; other kinds of fruit
    - libraries, theaters; residential buildings

10. a. The cars are good.
The new cars are good.
The new imported cars are good.
The new cars imported from America are good.

    b. The letters arrived on time.
The important letters arrived on time.
The letters sent to Armenia arrived on time.
The important letters sent to Armenia arrived on time.

    c. Those cars are new.
Those cars near the theater are new.
The cars are lined up.
The cars lined up near the theater are new.

    d. This sum (of money) is from your father.
This large sum of money is from your father.
A large sum of money has been transferred to your account.
This large sum of money transferred to your account is from your father.

D. Listening In

1. Smith tells Aramian about his trip abroad.

Արամեան․ Հիմա, որ ժամանակ ունես, խնդրում եմ պատմես Միջին Արեւելքում կատարած քո ճամբորդութեան մասին։

Սմիթ․ Ուրախութեամբ։ Բայց չգիտեմ որտեղից սկսեմ։

Արամեան․ Տարբերութիւն չի անի։ Ինչ էլ որ պատմելու լինես, ինձ պիտի հետաքրքիր։

Սմիթ։ Այդ դէպքում, ես պիտի աշխատեմ Թէհրանի շուկայի մասին խօսել։

Արամեան․ Ուրեմն Թէհրան էլ եղա՞ր։

Սմիթ․ Այո։ Արեւելեան այդ քաղաքն իսկապէս որ տեսնելիք է։

Արամեան․ Խնդրում եմ, ամէն ինչի մասին մանրամասօրէն պատմես։ Վստահ եղիր, որ այլեւս չեմ խանգարի քեզ։

Սմիթ․ Թէհրանի շուկան գտնւում է մայրաքաղաքի հարաւային մասում և յայտնի է իր գմբեթաձեւ առաստաղով։

Արամեան․ Ներողութիւն։ Առաստաղ ասացի՞ր։ Չեմ հասկանում, թէ ի՞նչ ես ուզում ասել։

Սմիթ․ Ասեմ։ Շուկան սկսում է մի հրապարակով և վերջանում է մի նեղ ու ոլորապտոյտ փողոցով, որը առաստաղ ունի։ Այդ փողոցի վրայ են գտնւում խանութները։

Արամեան․ Յետո՞յ։

Սմիթ․ Այդ շուկան ունի շատ բաժանմունքներ, որտեղ իւրաքանչիւր արհեստ ու առեւտուր մի յատուկ մասում է հաւաքուած։

Արամեան․ Շատ եմ լսել պարսկական գորգերի մասին։

Սմիթ․ Այո գործերը գեղեցիկ են։ Բայց բացի տեղական ապրանքներից կան նաև Եւրոպայից և Ամերիկայից ներմուծուած ուրիշ ապրանքներ։

Արամեան․ Շատ հետաքրքիր է։ Եթէ քեզ հաճելի է, գնանք այս դիմացի սրճարանում խօսենք։

Սմիթ․ Շատ լաւ։ Գնանք։

2. Smith and Aramian are in a coffee shop.

Արամեան․ Այստեղ կարգին ժխոր է։

Սմիթ․ Այո, շատ աղմուկ կայ։

Արամեան․ Կիրակի՞ է այսօր։

Սմիթ․ Այո։ Ինչո՞ւ էք հարցնում։

Արամեան․ Ընդհանրապէս, կիրակի օրերին շատ մարդ է լինում այստեղ։

Սմիթ․ Յաճա՞խ էք գալիս այստեղ։

Արամեան․ Երբեմն միայն։

Սմիթ․ Ասում են, այս ճաշարանի սուրճը յայտնի է։

Արամեան։ Չգիտեմ։ Որովհետեւ, ես միայն թէյ եմ խմում։

Սմիթ․ Ներողութիւն։ Դուք ի՞նչ էք ուզում պատուիրել։

Արամեան․ Ճիշտն ասած չգիտեմ։ Աւելի լաւ է, կանչենք սպասուհուն և նրանից հարցնենք, թէ ինչ ունեն։

E. Exercises

Fluency Drills

1. Where have our friends gone?
They went to the market place.

But didn't you want to go too?
Yes, but I was sleeping when they left.

2. Aren't we going to the opera tonight?
   No, we'll have to change our plans.
   But why? Weren't you planning to go?
   Yes, but unfortunately I have to work tonight. I'm sorry, because I've never yet seen an Armenian opera.

3. What an interesting street this is! There are all sorts of shops lined up on both sides.
   Yes. This is the bazaar. Have you ever seen a bazaar (before)?
   No. Tell me. What are those men selling?
   They are rug merchants. They have their own special section.
   It's quite different from Fifth Avenue!

4. A friend of mine told me that you are quite familiar with the bazaar.
   A little. I've lived here three years. But in the bazaar there are all kinds of people, all kinds of trades, and all kinds of merchandise.
   I'll have to go and see for myself. Will you come with me?
   Yes. It'll be interesting for me also. It would require twenty years to see and understand the whole bazaar.

5. I've just gotten back from the bazaar. If I am not disturbing you, I'll tell you about the things I saw. (past participle 2)
   I didn't understand what you said. (past participle 2) Please speak slowly.
   Here is the rug that I bought. (past participle 2) It's beautiful, isn't it?
   Yes, it is. Your wife will like it a lot.

6. Besides this rug, what did you buy?
   Nothing. There was so much confusion that I couldn't understand a thing.
   I hope the noise didn't disturb you.
   At first, yes, but it was really something worth seeing. I stayed until evening.

Conversation

1. Aramian is going to take Smith and Brown to see the bazaar. They ask him about the things they are going to see, and he answers their questions, volunteering further information if they desire.

2. Vartanian has just arrived in an American city. His friend Brown is to take him shopping. They discuss what they are going to shop for. Vartanian asks Brown what the shopping district is like and Brown tells him.

3. Two friends are at the waterfront of a large port. They fall to discussing the main imports and exports that pass through the port.

LESSON 20

A TRIP TO LAKE SEVAN

A. Basic Sentences

	Mr. Aramian	
I hope you are fine, Mr. Smith.	Յոյս ունեմ առողջ էք, պարոն Սմիթ:	
	Mr. Smith	
attentiveness	ուշադրութիւն	ušadrutyún
I am touched by your attention.	Զգացուած եմ ձեր ուշադրութեան համար:	
Why did you ask?	ինչո՞ւ հարցրիք:	
	Mr. Aramian	
to my eye	աչքիս	ačkís
to turn pale	գունատուել	gunat'vél
You look a little pale to me.	Աչքիս մի քիչ գունատուած էք երեւում:	
	Mr. Smith	
apparently, probably	երեւի	yereví
too, very much	չափազանց	čapazánc
to get tired	յոգնել	hoknél
Probably that is from being too tired.	Երեւի այդ չափազանց յոգնած լինելուց է:	
	Mr. Aramian	
Tired? Why?	Յոգնա՞ծ: ինչո՞ւ:	

Mr. Smith

Sevan (a lake)	Սեւան	seván
From traveling. I've just come from Lake Sevan.	Ճանապարհից։ Հէնց հիմա Սեւանից եմ գալիս։	

Mr. Aramian

Did you go to Sevan?	Սեւա՞ն էիք գնացել։	

Mr. Smith

famous	անուն հանած	anùn hanác'
lake	լիճ	líč'
Yes. I wanted to have seen that famous lake.	Այո։ Ուզեցի այդ անուն հանած լիճը տեսած լինել։	

Mr. Aramian

satisfied	գոհ	góh
Were you pleased?	Գոհ մնացի՞ք։	

Mr. Smith

embrace	գիրկ	gírk'
to fall	ընկնել	ənk'ənél
located (having fallen)	ընկած	ənk'ác'
sea	ծով	c'óv
really	իրապէս	irap'és
Very much. That sea, surrounded by mountains, is really beautiful.	Շատ։ Լեռների գրկում ընկած այդ ծովը իրապէս գեղեցիկ է։	

	Mr. Aramian	
windy	քամոտ, քամիոտ	kamót’, kamiót’
Was it windy?	Արդեօք, եղանակը քամո՞տ էր։	
	Mr. Smith	
peaceful	խաղաղ	xaqáq
you think	կարծես	k’arc’és
No. The sea was calm. You’d think it was asleep. But I’d better go. It’s already late.	Ոչ։ Ծովը խաղաղ էր։ Կարծես քնած լինէր։ Բայց ես գնամ։ Ուշ է արդէն։	
	Mr. Aramian	
Why are you rushing? Maybe you are hungry.	ինչո՞ւ էք շտապում։ Սոված էք երեւի։	
to dine	ընթրել	əntrél
Stay with us for dinner.	Մնացէք մեզ հետ ընթրելու։	
	Mr. Smith	
to sit down	նստել	nəst’él
No. I’m not so hungry. I’d better go. Probably my wife is waiting for me.	Չէ, այնքան էլ սոված չեմ։ Գնամ։ Կինս երեւի նստած հիմա, ինձ է սպասում։	
	Mr. Aramian	
to rent	վարձել	varjél

Are you satisfied with your newly rented house?	գո՞հ էք, ձեր նոր վարձած բնակարանից։	
	Mr. Smith	
bad	վատ	vát’
It’s OK. It isn’t bad. Although the house is not newly built.	Լաւ է, վատ չէ։ Թէեւ տունը նոր չէ կառուցուած։	
(Mr. Aramian tells Mr. Vartanian about Mr. Smith’s trip to Lake Sevan)		
	Mr. Aramian	
to know	իմանալ	imanál
I think you knew, didn’t you, that Mr. Smith went to Lake Sevan.	կարծեմ իմացաք չէ՞, որ պարոն Սմիթը Սեւան էր գնացել։	
	Mr. Vartanian	
news	նորութիւն	norutyún
No. That’s news to me.	Ոչ, դա ինձ համար նորութիւն է։	
When did he go?	Ե՞րբ էր գնացել։	
	Mr. Aramian	
before, ago	առաջ	ařáč
two days ago	երկու օր առաջ	yerk’ú òr ařàč
Two days ago. He was very impressed with it.	Երկու օր առաջ։ Շատ է տպաւորուած Սեւան լճից։	

Mr. Vartanian

That's interesting to know.	Հետաքրքիր է իմանալ։	
What did he say about Sevan?	Ի՞նչ է պատմում Սեւանի մասին։	

Mr. Aramian

He said that he had never seen such a beautiful lake in his life.	Ասաց, որ այդքան գեղեցիկ լիճ դեռ չէր տեսել իր կեանքում։	

Mr. Vartanian

Did he go alone?	Մենա՞կ էր գնացել։	

Mr. Aramian

friend	ընկեր	ənk'ér
to accompany	ընկերակցել	ənk'erak'cél
I'm not sure, but I think he said that on tne way he found a friend who went along with him.	Վստահ չեմ։ Բայց կարծում եմ ասաց, թէ ճանապարհին մի ընկեր էր գտել, որն իրեն ընկերակցել էր։	

Mr. Vartanian

small boat	նաւակ	navák'
to go for (a ride, walk)	պտտել	p'ət'ət'él
Did they go for a boat ride?	Արդեօ՞ք, նաւակով պտտել են։	

Mr. Aramian

fortunately	բարեբախտաբար	barebaxt'abár
quiet	հանդարդ, հանդարտ	handárd, handárt

Yes. Fortunately Sevan was calm.	Այո։ Բարեբախտաբար, Սեւանը հանդարտ է եղել։	

Mr. Vartanian

to descend, go down	իջնել	ičnél
island	կղզի	k'əqəzí
And did they go out to the island?	Իսկ իջե՞լ են կղզին։	

Mr. Aramian

enthusiasm	ոգեւորութիւն	vokevorutyún
to describe	նկարագրել	nək'aragərél
monastery	վանք	vánk
Yes. He described with great enthusiasm how beautiful he thought the monastery was.	Այո, նա մեծ ոգեւորութեամբ, նկարագրեց, թէ որչափ գեղեցիկ է գտել վանքը։	

Mr. Vartanian

But why didn't you go with him?	Բայց ինչո՞ւ դուք իր հետ չգնացիք։	
occasion, opportunity	առիթ	ařít
to lose	կորցնել	k'orcənél
If I had been in your place, I wouldn't have missed the chance.	Եթէ ձեր տեղը լինէի, առիթը չէի կորցնի։	

Mr. Aramian

to propose	առաջարկել	ařačark'él
row, series	շարք	šárk

personal	անձնական	anjnak'án
to permit	թույլ տալ	túyl t'àl
Mr. Smith suggested that I go with him, but a lot of personal business affairs prevented me.	Պարոն Սմիթը առաջարկեց, որ իրեն ընկերակցեմ, բայց մի շարք անձնական գործերս թույլ չտուին:	
following, next	յաջորդ	haǰórt
I hope I can go next time.	Յոյս ունեմ յաջորդ անգամ:	

B. Grammatical Notes

20.1 The Past Perfect

Did you go to Sevan?	Սեւա՞ն էիք գնացել:
I think he said that he found a friend on the way.	Կարծեմ ասաց, թէ ճանապարհին մի ընկեր էր գտել:
I went to the University two days ago.	Երկու օր առաջ համալսարան էի գնացել:
I had told him to bring my book with him.	Իրեն ասել էի, որ իմ գիրքն իր հետ բերի:
I wrote my friend last year, but I didn't hear from him.	Անցեալ տարի ընկերոջս մի նամակ էի գրել, բայց իրենից լուր չստացայ:

Past participle I used with the past tense of the verb 'to be' forms a new tense form which we will call the past perfect. This form may be used to replace either the present perfect or the preterite but implies that the action took place earlier than either of these forms would imply.

I have often gone to New York. { Ես շատ եմ Նիւ-Եորք գնացել:
Ես շատ էի Նիւ-Եորք գնացել:

Of the above sentences, the first does not indicate how recently I last went there. I might have just returned. The second sentence implies that it is some time since I was last there. Note that the preterite may not be used in the above statement with the meaning given in English.

I often went to New York that year.

Ես այս տարի Նիւ-Եորք շատ գնացի (գնացել էի)։

In the above sentence the past perfect implies that the year referred to is more distant in the past than the use of the preterite would imply. The present perfect may not be used in this construction if a definite time is stated.

Note that the past perfect գնացել էի is not necessarily the equivalent of English 'I had gone', whereas the present perfect գնացել եմ is almost always the equivalent of English 'I have gone' and the preterite գնացի the equivalent of English 'I went, I did go'.

20.2 Indirect Statement

He said that he had never seen such a beautiful lake in his life.

Ասաց (որ) այդքան գեղեցիկ լիճ դեռ չէր տեսել իր կեանքում։

He says that he will go to New York next week.

Նա ասում է (որ) միւս շաբաթ
Նիւ-Եորք
- է գնալու։
- է գնում,
- կը գնայ։
- պիտի գնայ։

He said he would read the letter.

Ասաց (որ)
- կը կարդայ գիրքը։
- կարդալու է գիրքը։
- պիտի կարդայ գիրքը։

In English, in reporting what someone else said, the tense of the verb in the subordinate clause depends on the tense of the verb in the main clause. Thus, to report that someone said, "I will go to New York," we say, "He says he will go to New York"; but, if we report in the past, we say, "He said he would go to New York." In Armenian, the form of the verb in the subordinate clause is the same as the form used in the original statement and is unaffected by the form of the verb of reporting. Thus, if the man said Ես Նիւ-Եորք կը գնամ this will be reported as Ասում է, որ Նիւ-Եորք կը գնայ or Ասաց, որ Նիւ-Եորք կը գնայ with կը գնայ regardless of the preceding verb form.

Note that որ may be used or not used, just like the 'that' in the English equivalents.

20.3 Conditions in the Past

Had I been in your place, I wouldn't have missed the chance.	Ես ձեր տեղը լինեի, առիթը չէի կորցնի։
I would have gone to the University if I had had the money.	Համալսարան կը գնայի, եթէ դրամ ունենայի։

In a conditional sentence referring to an event that is contrary to fact in past time, the verb in the if clause is in the past optative and the verb in the result clause in the past future. Note that *եթէ* may be omitted in Armenian just as the 'if' may be omitted in English.

20.4 Perfect Infinitive

I wanted to see that lake.	Ուզեցի այդ լիճը { տեսած լինել։ տեսնել։
I wanted to go to New York tomorrow.	Ուզում եմ Նիւ-Եօրք { գնացած լինել գնալ } վաղը։

Past participle 2, but not past participle 1, may be used with the infinitive of the verb 'to be' *լինել* . This form we will call the perfect infinitive. After the verb 'to want' either the present infinitive or the perfect infinitive may be used, as illustrated in the above sentences.

20.5 'to sit, stand, sleep'

I'm sitting down. (process)	Նստում եմ։
I'm sitting down. (state)	Նստած եմ։
He's standing up near the house. (state)	Նա տան մօտ է կանգնած։
He's standing up to speak. (process)	Նա կանգնում է, խօսելու համար։

In English, 'he is sitting down' may indicate either a process or a state, and likewise 'he is standing up'. In Armenian, for both verbs the present progressive indicates the process, i.e., 'he is in the process of sitting down, getting up'. Past participle 2 used with the verb 'to be' indicates the state.

My daughter is going to sleep. (process)	Աղջիկս քնում է: Աղջիկս քնած է: Աղջիկս քնել է:
My daughter's sleeping. (state)	Աղջիկս քնել է: Աղջիկս քնած է:

In English we distinguish between the state and the process in the case of the verb 'to sleep', but Armenian does not. Thus, the present progressive and the present perfect may refer either to the process or the state of sleeping.

20.6 'satisfied'

Were you satisfied?	Գոհ մնացի՞ք:
Are you satisfied with this University?	Գո՞հ էք այս համալսարանից:
We weren't satisfied with the breakfast.	Նախաճաշից գոհ չմնացինք:

The form գոհ means 'satisfied' and may be used either with the verb լինել 'to be' or with the verb մնալ 'to remain' in the meaning 'to be satisfied'. The thing one is satisfied with is put in the ablative case.

C. Exercises

Variation Drills

1. They had already __________ when I arrived.
   - gone to the bank
   - ordered lunch
   - attended to it
   - received my letter
   - begun to dine

2. He told me that __________.
   - I was disturbing him
   - he had lost his money
   - he would examine me
   - this river is called the Arax
   - he was going to the bazaar
   - he felt sick

3. If you had the flu, ___________.
   you would have a fever
   you would have a headache
   your eyes and ears would bother you
   you wouldn't have been able to work
   you would have had to rest at home

4. If you had gone with us to the opera, ___________.
   you would have enjoyed it a lot
   I would have bought your ticket
   you would have liked the music
   you would have met our friends
   you would have been late
   we would have been very happy

5. The tailor will probably say ___________.
   that my clothes aren't ready
   that he has repaired my suit
   that he will repair your suit

6. He's sitting by the window.
   That man sitting by the window is our teacher.
   They're standing near the door.
   The boys standing near the door are our sons.
   Our children are asleep.
   Our children are going to sleep now.

7. Were you satisfied with ___________?
   the food   the medicine   your car
   the opera   the library   your trip

D. Listening In

1. Mr. Smith and Mr. Aramian are at a railroad station.

Սմիթ. Ձեր գնացքը ժամը քանիսի՞ն է մեկնում:
Արամեան. Ժամը երեքն անց քսանին: Դեռ մի քիչ ժամանակ ունեմ:
Սմիթ. Ամերկայում առաջին անգա՞մ է, որ գնացքով պիտի ճամբորդէք:
Արամեան. Այո: Անհամբեր սպասում եմ գնացքի ճանապարհ ընկնելուն:
Սմիթ. Ո՞ւր պիտի գնաք:
Արամեան. Շիքագօ. եղբօրս մօտ:
Սմիթ. Շիքագօն մեծ քաղաք է և այնտեղ շատ նորութիւններ պիտի տեսնէք:
Արամեան. Այո: Ամերիկան, ընդհանրապէս, նորութիւնների երկիր է:

Սմիթ. Բոլորն էլ այդպէս են ասում: Բարեբախտաբար դուք անգլերէն էք խօսում և այդ նորութիւնների հետ շուտ կարող էք ծանօթանալ:

Արամեան: Ես էլ եմ կարծում, որ առանց անգլերէն գիտնալու ինձ դժուար կը լինէր այստեղ:

Սմիթ. Ներողութիւն, պարոն Արամեան, իմ գնացքը մեկնելու վրայ է: Ես գնամ: Յոյս ունեմ նորից կը տեսնուենք:

Արամեան. Ձեզ յաջողութիւն եմ ցանկանում: Ցտեսութիւն:

Սմիթ. Ցտեսութիւն: Ձեզ նոյնպէս յաջողութիւն:

2. Aram and his brother Armen are out for a walk.

Արմէն. Աչքիս մի քիչ գունատուած ես երեւում: Յոգնա՞ծ ես:

Արամ. Ոչ գլխացաւ ունեմ: Եթէ մի քիչ այստեղ, այս մաքուր օդի մէջ պտտենք, կարծում եմ կանցնի:

Արմէն. Եթէ քեզ վատ ես զգում, կարող ենք նստել:

Արամ. Ոչ: Հէնց այնպէս, թեթեւ գլխացաւ է:

Արմէն. Գուցէ նաւակ նստելուց է: Եթէ իմանայի այդպիսի բան չէի առաջարկի:

Արամ. Ընդհակառակը շատ գոհ մնացի: Ի՞նչ է այդ լճի անունը:

Արմէն. Այդ լիճը Միչիգան է կոչւում:

Արամ. Գեղեցիկ լիճ է: Բայց, Արմէն, ասա տեսնեմ, հեռւում այն նաւակների մօտ երեւացող բանն ի՞նչ է: Կղզի՞ է, թէ շէնք:

Արմէն. Ճիշտն ասած, ես էլ չեմ իմանում: Աւելի շատ կղզու է նման: Բայց ուշ է արդէն: Գնանք ընթրելու:

Արամ. Իսկ քաղաք պիտի իջնե՞ս:

Արմէն. Այո։ Ինչո՞ւ։

Արամ. Մի շարք անձնական գործեր ունեմ։ Ուզում եմ կարգադրել։

Արմէն. Այդ դէպքում, թոյլ տուր քեզ ընկերակցելու, քանի որ այդ քաղաքին անծանօթ ես։

E. Exercises

Fluency Drills

1. Did you enjoy your trip to Sevan?
   Yes. Although the weather wasn't so good, the lake was extremely beautiful.
   Then the weather was cloudy?
   Yes, and windy, too. It rained a little at 2 o'clock.

2. How was your trip?
   Fine. We came by boat. The sea was calm most of the time.
   And what about the sky? Was it clear?
   At first, it was cloudy, but afterwards we had sunny weather. We were very well satisfied with our trip.

3. Did you come by plane?
   No. If we had come by plane, the trip would have cost a thousand dollars.
   Then you preferred to come by ship? Were you satisfied with the ship?
   In general, yes, although it was not new.

4. Did you enjoy your plane trip?
   Yes, I sat by the window in order to see the rivers, the cities, and the beautiful green plains of your country.
   And do you plan to return by plane?
   Unfortunately not. If I had the money, I would, but I think it will be better to return by train.

5. I've been told that you have rented a house in our section of town. How do you like it?
   The section of town is very nice, but the house is not so good.
   No? Why not?
   I bought the house from Mr. Brown. He told me that it would be cool in the house in the summer, but it's very hot.

6. Did Smith tell you that he has rented a house in our part of town?
   Yes, but he said that he wasn't satisfied with it.
   Oh is that so? You think he's going to move again?
   I don't think so. He said he likes the part of town very much.

Conversation.

1. Smith had gone on a sightseeing trip around Yerevan, and had seen the bazaar. He told Aramian about it, and now Aramian tells Vartanian what Smith had told him.

2. Smith has just arrived in New York after a somewhat unsatisfactory trip to Europe. He is full of regrets about what he didn't do, and what he didn't see, and all sorts of bad luck and unfortunate decisions. He discusses these with Vartanian.

3. Smith and an Armenian friend discuss a recent business trip to Europe.

LESSON 21

THE LIBRARY

A. Basic Sentences

	Mr. Smith	
head librarian	գրադարանապետ	gəradaranap'ét'
Excuse me, Miss. May I see the head librarian for a few minutes?	Ներողութիւն, օրիորդ, կարո՞ղ եմ մի քանի րոպէով գրադարանապետին տեսնել։	
	Assistant	
absent	բացակայ	bacak'á
The head librarian isn't in today, but perhaps I can help you.	Գրադարանապետն այսօր բացակայ է։ Բայց գուցէ ես կարողանամ ձեզ օգտակար լինել։	
	Mr. Smith	
a study	ուսումնասիրութիւն	usumnasirutyún
to do, accomplish	կատարել	k'at'arél
source	աղբիւր	axp'yúr
need	պէտք	p'et'k
Thank you, Miss. I am doing a study on Armenia. I need some source materials.	Շնորհակալութիւն, օրիորդ։ Ես մի ուսումնասիրութիւն եմ կատարում Հայաստանի մասին։ Աղբիւրների պէտք ունեմ։	

Assistant

subject, material	նիւթ	nyút
In our library we have a lot of books and materials on Armenia.	Մեր գրադարանում, Հայաստանի մասին բաւական գրքեր և նիւթեր ունենք։	
about, around	շուրջ	šúrj
What subject do you want to write your study about?	ի՞նչ նիւթի շուրջ էք ուզում գրել ձեր ուսումնասիրութիւնը։	

Mr. Smith

political	քաղաքական	kaqakak'án
About the political problems of Armenia.	Հայաստանի քաղաքական խնդիրների շուրջ։	
accurate	ճհգրիտ	č'əšgərít'
idea	գաղափար	gaqapár
to form, construct	կազմել	k'azmél
obligatory	հարկաւոր	hark'avór
historical	պատմական	p'atmak'án
geographical	աշխարհագրական	ašxaragərak'án
economic	տնտեսագիտական	t'ənt'esagit'ak'án
But in order to get a general and accurate idea of the subject, I will have to have books on history, geography, and economics.	Բայց մի ընդհանուր ու ճշգրիտ գաղափար կազմելու համար, ինձ հարկաւոր են, թէ՛. պատմական, աշխարհագրական և թէ տնտեսագիտական գրքեր։	

Assistant

few	քիչ	kíč
publication	հրատարակութիւն	hərat'arak'utyún
Unfortunately, we have few publications in English on those subjects.	Դժբախտաբար, մեզ մօտ ա՛յդ նիւթերի շուրջ անգլերէնով քիչ հրատարակութիւններ կան:	
valuable	արժէքաւոր	aržekavór
But the ones we do have are valuable works.	Բայց եղածներն արժէքաւոր գործեր են:	

Mr. Smith

French (language)	ֆրանսերէն	franserén
German (language)	գերմաներէն	germanerén
But what about Armenian, French and German?	հայերէնով, ֆրանսերէնով, կամ գերմանեէնով ինչպէ՞ս:	

Assistant

serious	լուրջ	lúrǰ
Yes, there are lots of serious works in those languages.	Այո, պարոն: Այդ լեզուներով լուրջ գործեր շատ կան:	
asking	հարցում	harcúm
is it that...?	մի՞թէ	mité
to read	կարդալ	k'artál
But, pardon me for asking, do you	Բայց ներողութիւն հարցումիս համար,	

read Armenian?	մի՞թե դուք հայերէն կարդում էք:	
	Mr. Smith	
Yes. I'm quite familiar with Armenian.	Այո, օրիորդ. բաւական ծանօթ եմ հայերէնին:	
	Assistant	
undoubtedly	անշուշտ	anšúšt'
curiosity	հետաքրքրութիւն	het'akərkrutyún
Of course, you'll pardon me for my curiosity, but where did you study?	Անշուշտ կը ներէք հետաքրքրութեանս համար. որտե՞ղ էք սովորել:	
to seem	թուալ	təvál
You look like an American to me.	ինձ թւում է, որ դուք ամերիկացի էք:	
	Mr. Smith	
Yes, I am. I studied Armenian in America.	Այո, ամերիկացի եմ: Հայերէնը սովորել եմ Ամերիկայում:	
	Assistant	
thrill, joy	հրճուանք	hərč'vánk
circumstances	հանգամանք	hangamánk
foreigner	օտարական	ot'arak'án
to be curious	հետաքրքրուել	het'akərkərvél
It makes me very happy when a foreigner takes an interest in the life of my people.	ինձ մեծ հրճուանք է պատճառում այն հանգամանքը, երբ մի օտարական հետաքրքրւում է իմ ժողովուրդի կեանքով:	

Mr. Smith

I'm touched, Miss.	Զգացուած եմ, օրիորդ։	

Assistant

to profit	օգտուել	okt'əvél
sociological	հասարակագիտական	hasarak'agit'ak'án
Since you know Armenian, I'll give you some advice on how to profit from our section on sociology.	Քանի որ հայերէն գիտէք, այդ դէպքում ձեզ խորհուրդ եմ տալիս օգտուելու մեր գրադարանի հասարակագիտական բաժնից։	
material for study	ուսումնասիրելիք	usumnasirelík
In that section you'll find all the material you need for your study.	Այդ բաժնում դուք կը գտնէք ձեր ուսումնասիրելիք բոլոր նիւթերը։	

Mr. Smith

boundless	անչափ	ančáp
Many thanks.	Անչափ շնորհակալ եմ, օրիորդ։	

Assistant

success	յաջողութիւն	haǰoγutyún
Not at all. I wish you success in your work.	Խնդրեմ։ Յաջողութիւն եմ ցանկանում ձեր աշխատանքին։	

B. Grammatical Notes

21.1 Duration of time

May I see the head librarian for a few minutes?	կարո՞ղ եմ քանի րոպէով գրադարանապետին տեսնել :
I'm going to Europe for two years.	Երկու տարով Եւրոպա եմ գնալու :
Last year I went to Europe for two weeks.	Անցեալ տարի, երկու շաբաթով Եւրոպա գնացի:

Time expressions that indicate duration of time, the time during which something took place, appear in Armenian in the instrumental case. Remember that a time expression in the ablative (Note 10.4) indicates the end of the time involved. Thus 'in a few minutes' appears in the ablative in Armenian, մի քանի րոպէից, but 'for a few minutes' appears in the instrumental, մի քանի րոպէով:

21.2 շուրջ /šúrǰ/ 'about around'

What subject do you want to write about?	Ի՞նչ նիւթի { շուրջ էք ուզում գրել: մասին էք ուզում գրել:
There are a lot of gardens around this house.	Այս տան շուրջը շատ այգիներ կան:

The postposition շուրջ means 'about, concerning' and in this meaning freely replaces մասին . It also has the meaning 'about, around', i.e., 'physically surrounding', a meaning that մասին does not have. The postposition շուրջ requires the noun used with it to be in the genitive case.

21.3 միթէ /mítè/

Aramian went to New York. Is that so?	Արամեանը Նիւ-Եօրք է գնացել...Մի՞թէ:
Don't you know Mr. Smith? (Surely you know Mr. Smith?)	Մի՞թէ չէք ճանաչում պարոն Սմիթին:
Surely you don't read Armenian, do you?	Մի՞թէ դուք հայերէն կարդում էք:

The expression միթէ may be translated literally as 'not that' or 'it is not that'. It is used to introduce a question but implies that the speaker would be surprised if the statement following միթէ were true. It may be used by itself to throw doubt on the truth of a previously made statement, like English "Is that so?".

21.4 "both...and"

I have to have books on history and geography, and also on economics.	Ինձ հարկաւոր են թէ պատմական, թէ աշխարհագրական և թէ տնտեսագիտական գրքեր։

The expression թէ ... թէ is used in Armenian as an equivalent of English 'both...and'. Note that it may be used in a series of more than two things, in which case we have no literal equivalent in English.

21.5 Noun-forming suffixes

(a) -ութիւն /-utyun/

Many nouns in Armenian consist of a stem (which is most often an adjective or a verb stem, but may occasionally be a noun stem as well) combined with the suffix -ութիւն. Most of these nouns mean abstract qualities or states ("gratitude", "happiness", and the like), but various other meanings are also encountered.

The rules for the combination of stems with ութիւն may not be stated simply. The number of stems that may combine with the suffix is limited, and the formations that do occur are not entirely regular. You should therefore not try to make up such formations yourself, though knowledge of the suffix will be of great help to you in learning new words. For example, if you know that յարմար means 'convenient', you will have no trouble recognizing յարմարութիւն as 'convenience'.

The form of the stem of words ending in -ութիւն is not necessarily the same as the uncombined form of that stem. For example, if the vowel of the last syllable of the stem is /i/, this vowel is regularly dropped in combination with -ութիւն. The same is occasionally true of the vowel /u/. Certain consonants may be altered or may disappear altogether.

Study the following examples:

Stem		Combined Form	
շնորհակալ	grateful	շնորհակալութիւն	gratitude
ներող	forgiving	ներողութիւն	forgiveness
ուրախ	happy	ուրախութիւն	happiness
տարբեր	different	տարբերութիւն	difference

ուշադիր	careful	ուշադրութիւն	carefulness
գեղեցիկ	beautiful	գեղեցկութիւն	beauty
առողջ	healthy	առողջութիւն	health
յարմար	convenient	յարմարութիւն	convenience
նեղ, նեղել	narrow, to trouble	նեղութիւն	inconvenience
տեսնել	to see	ցտեսութիւն	au revoir
այցելել	to visit	այցելութիւն	visit
ցուրտ	cold	ցրտառութիւն	a cold
ցանկանալ	to desire	ցանկութիւն	desire
այգի, գործ	garden, work	այգեգործութիւն	horticulture
պարտական	indebted	պարտականութիւն	duty
երաժիշտ	musician	երաժշտութիւն	music

(b) —արան /-aran/

This suffix occurs often in Armenian, usually in combinations with verb stems, but occasionally with noun stems as well. The resulting noun usually means a place connected with whatever is meant by the stem. For example, the verb stem ճաշ— means 'to eat, to dine' and the noun ճաշարան means 'dining place', i.e., 'restaurant'. An exception is the noun տեսարան, based on the verb տեսնել 'to see'; the combined form, instead of having the expected meaning 'place where one sees', means 'that which is seen', or 'view'.

Study the following examples:

Stem		Combined Form	
ճաշել	to dine	ճաշարան	restaurant
կայ	there is	կայարան	station
լսել	to hear	լսարան	auditorium
գործ, գործել	work (to work)	գործարան	factory
յարդուկել	to press	յարդուկարան	pressing shop

պահել	to keep	պահարան	cupboard
բնակել	to dwell	բնակարան	private residence
լողանալ	to bathe	լոկարան	bathroom
տեսնել	to see	տեսարան	view
դեղ	medicine	դեղարան	pharmacy

(c) -անոց /-anoc/

This suffix usually occurs in combination with noun stems referring to persons, or, occasionally, to things. The resulting noun signifies a place associated with that person or thing.

Stem		Combined Form	
հյուր	guest	հյուրանոց	hotel
վարսավիր	barber	վարսավիրանոց	barber shop
կոշկակար	shoemaker	կոշկակարանոց	shoemaker's shop
խոհ	meat, food	խոհանոց	kitchen
հիվանդ	sick	հիվանդանոց	hospital

C. Exercises

Variation Drills

1. We're going to stay in America __________.

for a few days	for two years
for a few months	for seven months
for a few weeks	for fourteen days

2. My teacher is writing a book about __________.
   - the Russian language
   - American political problems
   - European economic problems
   - his trip
   - the life of Abovyan
   - the Armenian language

3. Do you __________ Armenian?

   speak   read   like   understand

   Do you __________?
   - prefer to work in the library
   - like Armenian music
   - work in the canning factory in Artashat

   Have you __________?

been in Florida	seen the city bazaar
seen all those operas	rented a new house

4. I need both Armenian and English books.
   I'm going to go to both New York and Philadelphia.
   I'd like both Persian and Russian foods.
   I have to go to both the barber shop and to the post office.

D. Listening In

1. Mr. Smith and Mr. Aramian are at the New York Public Library

Սմիթ· Ահա և Նիւ-Եօրքի հանրային գրադարանը: Ինչ գրքեր և ուսումնասիրութեան համար աղբիւրներ, որ ուզէք այստեղ կը գտնէք:

Արամեան· Իհարկէ, ինձ հետաքրքրում է արեւելեան բաժինը: Աւելի շատ, հայկականը:

Սմիթ· Այդ դէպքում գնացէք երկրորդ յարկը: Այնտեղ, արեւելեան բաժնի գրադարանապետը ձեզ օգտակար կը լինի:

Արամեան· Բայց, արդեօք, հայերէն գրքեր կա՞ն այստեղ, թէ միայն անգլերէն, կամ այլ

լեզուներով են եղած հրատարակութիւնները։

Սմիթ․ Անշուշտ կան․ բայց եթէ ցանկանում էք աւելի մանրամասն ուսումնասիրութիւն կատարել, կարող էք օգտուել նաև անգլերէնի, ֆրանսերէնի և գերմաներէնի բաժիններից։

Արամեան․ Ինձ թւում է, թէ աղբիւրների շատ պէտք պիտի ունենամ։

Սմիթ․ Ներողութիւն ի՞նչ նիւթի մասին էք ուզում գրել։ Կարո՞ղ եմ մի ընդհանուր գաղափար կազմել։

Արամեան․ Այո, ինչու չէ։ Հայաստանի քաղաքական պատմութեան շուրջ եմ ուզում գրել։ Բայց ինձ հարկաւոր են, պատմական, աշխարհագրական, տնտեսագիտական, ինչպէս նաեւ հասարակագիտական աղբիւրներ։

Սմիթ․ Դա անչափ հետաքրքիր նիւթ է։ Մի քանի ամիս առաջ, այդ նոյն նիւթի շուրջ մի շատ արժէքաւոր գիրք կարդացի։

Արամեան․ Ի՞նչ է գրողի անունը։

Սմիթ․ Չեմ յիշում։ Կարծեմ ֆրանսացի է։ Իրապէս մեծ հետաքրքրութեամբ կարդացի։

Արամեան․ Ձեր մօ՞տ է հիմա այդ գիրքը։

Սմիթ․ Այո, մօտս է։ Կարող էք վերցնել։ Ինձ թւում է, թէ դուք շատ պիտի հաւանէք այդ գիրքը։

2. Mr. Aramian is at the Immigration Office

Ծառայող․ Ինչո՞վ կարող եմ ձեզ օգնել, պարոն։

Արամեան․ Շատ կուզէի կառավարիչին տեսնել։

Ծառայող․ Կառավարիչը հիւանդ է և բացակայ է այսօր։ Ի՞նչ խնդիր ունէք։

Արամեան․ Իմ թղթերի մասին եմ հետաքրքրւում։

Ծառայող․ Ի՞նչ է ձեր անունը։

Արամեան․ Արամ Արամեան։

Ծառայող․ Ամերիկացի՞ էք։

Արամեան․ Ոչ, պարոն, օտարական եմ։ Հայաստանից եմ։

Ծառայող․ Ե՞րբ էք Ամերիկա եկել։

Արամեան․ 1947 թուին։

Ծառայող․ Խնդրում եմ, ասել եւ ամիսը։

Արամեան․ 1947 թուի ապրիլի 16-ին։

Ծառայող․ Ձեր թղթերը մի քանի րոպէից յետոյ պատրաստ կը լինեն եւ դուք կարող էք ստանալ։

Արամեան․ Շատ շնորհակալ եմ։

Ծառայող․ Խնդրում եմ։ Չարժէ։

E. Exercises

Fluency Drills

1. Where were you last Friday? Why didn't you come over (/mez mot'/)?
   I was working in the library. I'm writing a study on Armenia.
   It's mainly on economic problems, isn't it?
   Yes, but general sociological problems are important too.
2. Then you were working in the library last week? Did you find all the materials you needed for study?
   Yes. The librarian was very helpful.
   How did you like (find) the economics section of the library?
   It is excellent. It has all the modern books on economics.
3. Let's go to the theater together next week.
   I'd like to very much, but I won't have time.
   On account of writing your paper?
   Yes. According to my plans, I'm going to work in the library eight hours a day.
4. Have you received any new publications?

Yes, a few, from Europe.
And where can I find them?
On the big table in that room. But after a few days we will put them in our sociological and political sections.

5. I've been in the library for two hours but I haven't found the section that interests me.
I'm sorry to hear it. If I'd known you weren't acquainted with our library, I would have helped you.
Oh? Do you work here?
No, but I frequently come here to read, and the librarian is a good friend of mine.

6. Where is Aram? He was going to meet me here in the library.
There he is, in the chair by the window. He's been sitting there for two hours.
How did it happen that I didn't see him?
Because your book is so interesting.

Conversation

1. Smith goes into an Armenian library and asks directions for finding books on certain subjects. The librarian asks him the precise nature of his interest. Smith answers.

2. Aramian is preparing a paper on European political problems. He has discussed it with Vartanian. In this conversation, Minassian, a political reporter, is asking Vartanian about it.

3. On their sightseeing trip around a big city, Aramian tells Vartanian in some detail about the public library, describing its contents and commenting on its importance in the life of the city and its university.

LESSON 22

IN A DORMITORY

A. Basic Sentences

Aram

quarter	քառորդ	kařórt
Vahan! It's already a quarter of eight! Aren't you going to class?	Վահա՛ն, արդէն ութին քառորդ է ուզում: Մի՞թէ համալսարան չպիտի՞ գնաս:	

Vahan

lesson	դաս	dás
Yes, but my first class is at nine. I've got plenty of time.	Այո: Բայց իմ առաջին դասը իննին է սկսում: Բաւական ժամանակ ունեմ:	

Aram

to shave	սափրուել	sapərvél
to get dressed	հագնուել	haknəvél
hardly	հազիւ	hazív
to eat breakfast	նախաճաշել	naxač'ašél
But by the time you shave, wash, and get dressed, we'll hardly have time to have breakfast together.	Բայց մինչեւ որ սափրուես, լուացուես ու հագնուես հազիւ թէ ժամանակ ունենանք միասին նախաճաշելու:	

Vahan

What are you always rushing for?	Չգիտեմ ի՞նչու ես դու միշտ շտապում:	
civilized	քաղաքակիրթ	kaqakak'írt
never	երբեք	yerpék
Haven't you heard that a civilized man never rushes?	Միթե չե՞ս լսել, որ քաղաքակիրթ մարդը երբեք չի շտապում:	
joke	կատակ	k'at'ák'
seriously	լրջորեն	lərǰorén
to accept	ընդունել	əntunél
Of course, I'm only joking. I hope you won't take what I said seriously.	Իհարկե կատակ եմ անում: Յոյս ունեմ լրջորեն չես ընդունի ասածս:	

Aram

word	խոսք	xósk
I understand. Who are you quoting?	Հասկանում եմ: Այդ ո՞ւմ խոսքերն են:	

Vahan

How should I know?	Ես ի՞նչ գիտեմ:	
that which interests	հետաքրքրող	het'akərkróq
razor	ածելի	ac'elí
soap	օճառ	oč'ář
At the moment what interests me most is whether I can use your razor and soap.	Այս րոպեին ինձ հետաքրքրող ամենակարեւոր խնդիրը այն է թե արդեօք կարո՞ղ եմ քո ածելին եւ օճառը գործածել:	

Aram

mood	տրամադրութիւն	t'əramadərutyún
You're really in a good mood today.	Այսօր դու իսկապէս որ լաւ տրամադրութեան մէջ ես։	
mirror	հայելի	hayelí
in front of	առջեւ	ařčév
Whatever you need you'll find in front of the mirror.	Ինչի որ պէտք ունես, հայելու առջեւ կը գտնես։	

Vahan

But that's not the end of the list.	Բայց այսքանով չվերջացաւ։	
oil	իւղ	yúq
comb	սանր	sánr
tooth	ատամ	at'ám
paste	խմոր	xəmór
I also want to ask you for shoe polish as well as your comb and tooth paste.	Քեզնից պիտի խնդրեմ նաեւ կօշիկի իւղ, ինչպէս եւ քո սանրն ու ատամի խմորը։	

Aram

complete	կատարեալ	k'at'aryál
That completes the list.	Կատարեալ եղաւ։	
to comb	սանրել	sanrél
hair	մազ	máz

to shine	փայլեցնել	paylecnél
would be interesting to know how you combed your hair and polished your shoes up to today.	Բայց հետաքրքիր է իմանալ թէ մինչեւ այսօր ինչպէս էիք սանրում ձեր մազերը եւ փայլեցնում ձեր կօշիկները:	

Vahan

know what you mean.	Գիտեմ ինչ էք ուզում ասած լինել:	
to let	թողնել	toqnél
to explain	բացատրել	bacat'rél
et me explain.	Թող բացատրեմ:	
vacation, holiday	արձակուրդ	arjak'úrt
return	վերադարձ	veradárc
to make a mistake	սխալուել	saxalvél
suitcase	պայուսակ	p'ayusák'
hen I went home yesterday for the holiday, on my return I took my brother's suitcase by mistake.	Երեկ երբ արձակուրդով տուն էի գնացել, վերադարձին, սխալուելով բերել եմ եղբօրս պայուսակը:	

Aram

to happen	պատահել	p'at'ahél
ow I understand what happened to you.	Հիմա հասկացայ թէ ինչ է պատահել քեզ:	
to be moved	շարժուել	šaržavél
turn	հերթ	hért
to seize, grasp	խլել	xəlél

But you'd better get moving or the other boys will take your turn.	Բայց դու լաւ կանես շարժուես, քանի դեռ միւս տղաները հերթդ չեն խլել:	
	Vahan	
without	առանց	ařánc
But I won't go without showing you my new suit.	Բայց առանց նոր զգեստներս ցոյց տալու չեմ գնայ:	
to look, look at	նայել	nayél
Look, do you like it?	Նայիր: Արդեօք հաւանո՞ւմ ես:	
expensive	թանկ	tánk'
It didn't cost me too much.	Այնքան էլ թանկ չէ նստել վրաս:	
acquaintance	ծանօթ	c'anót
cheap	աժան	ažán
My brother was able to buy it a little cheaper from a friend.	Եղբայրս կարողացաւ իր մի ծանօթից մի քիչ աժան գնել:	
	Aram	
Yes, it's a beautiful suit.	Այո, գեղեցիկ զգեստ է:	
trousers	տաբատ	t'abát'
grey	մոխրագոյն	moxragúyn
coat	բաճկոն	bač'k'ón
blue	կապոյտ	k'ap'úyt'
But why are the trousers grey and the coat blue?	Բայց ի՞նչու տաբատը մոխրագոյն է, իսկ բաճկոնը կապոյտ:	

Vahan

fashion	նորույթ	norúyt
Well, what can I say? It's a fashion.	Սիրելի բարեկամ, ի՞նչ ասեմ։ Նորույթ է։	
graduating	ավարտական	avart'ak'án
class	դասարան	dasarán
to dress	հագնել	haknél
Everybody in the graduating class is dressing that way.	Ավարտական դասարանում, հիմա բոլորը այդ են հագնում։	

Aram

Whatever it is, it's O.K.	Ինչ որ է, գեղեցիկ է։	
congratulations	շնորհավոր	sənorhavór
Congratulations (on your new suit).	Շնորհավոր։	
watch	ժամացույց	žamacúyc
When did you buy that watch?	Իսկ այդ ժամացույցը երբ ես գնել։	

Vahan

to present	նվիրել	nəvirél
birthday, anniversary	տարեդարձ	t'aredárc
My parents gave it to me for my birthday.	Դա էլ ծնողներս նվիրեցին ինձ տարեդարձիս առթիվ։	

Aram

When was your birthday?	Ե՞րբ էր քո տարեդարձը։	

Why didn't you tell me about it?	Ինչու ինձ չհայտնեցիր այդ մասին։	

Vahan

It was yesterday.	Երեկ էր։	
purpose	դիտում	dit'úm
I didn't tell you on purpose.	Դիտմամբ չհայտնեցի։	

Aram

That's not fair.	Այդ չեղավ։	
tie	փողկապ	poqk'áp'
to wish	մաղթել	maxtél
It's rather an overall view, but he went into great detail about the copper and salt production of the regions of Allahverdi and Zangezur.	Աւելի շուտ մի ընդհանուր ակնարկ է։ Բայց մանրամասորէն անդրադարձել է Ալավերդի եւ Զանգեզուրի շրջանի աղի ու պղնձի արդիւնաբերութեան։	
I always thought that Armenia was an entirely agricultural country.	Ես միշտ կարծում էի, որ Հայաստանը զուտ մի գիւղատնտեսական երկիր է։	

Mr. Aramian

to progress, develop	զարգանալ	zarganál
gradually	գնալով	gənalóv
Of course, agriculture is more fully developed in Armenia, but industry is coming to play an important role in the country.	Իհարկէ, գիւղատնտեսութիւնը աւելի զարգացած է Հայաստանում, բայց գնալով, ճարտարարուեստը կարեւոր դեր է կատարում երկրի մէջ։	

Mr. Smith

rich	հարուստ	harúst
mineral deposit, mine	հանք	hánk
From all appearances, the country has a lot of mineral deposits.	Ըստ երեւոյթին, երկիրը հարուստ է հանքերով։	

Mr. Aramian

compared	համեմատ, համեմատած	hamemát’, hamemat’ác’
molybdenum	արճիճ	arč’íč’
zinc	ցինկ	cínk’
silver	արծաթ	arc’át
gold	ոսկի	vosk’í
other	այլ	áyl
metal	մետաղ	met’áq
For its size, yes. There are deposits of molybdenum, zinc, silver, gold, and other metals.	Համեմատ իր մեծութեան, այո: Կան արճիճի, ցինկի. արծաթի, ոսկու եւ այլ մետաղների հանքեր:	

Mr. Smith

But what about factories?	Իսկ գործարաննե՞ր ինչպէս:	
that is...	այսինքն...	aysínkən...
That is, I mean, what factories are there?	Այսինքն ուզում եմ ասած լինել, ի՞նչ գործարաններ կան:	

Mr. Aramian

artificial	արհեստական	arhest’ak’án
rubber	ձգախէժ	jəgaxéž
textile	հիւսուածեղէն	hyusvac’eqén
foundry	ձուլարան, մետաղաձուլարան	julарán, met’aqajularán
factory, for producing machines	մեքենաշինման գործարան	mekenašinmàn gorc’arán
second	վայրկեան	vayrk’yán

Soviet	խորհրդային, սովետական	xorhərdain, sovet'ák'an
I can't remember everything at the moment.	Այս վայրկեանիս բոլորը չեմ կարող յիշել։	
The Armenian textile and synthetic rubber factories, the canneries and foundries, as well as the factories for producing machines, are famous throughout the Soviet Union.	Հայաստանի արհեստական ձգախէժի, հիւսուածեղէնի, մետաղաձուլման, պահածոյի, ինչպէս նաեւ մեքենաշինման գործարանները յայտնի են Խորհրդային Միութեան մէջ։	

Mr. Smith

questioning	հարցուփորձ	harcupórj
hydro-electric plant	ջրելեքտրօկայան	Jərelekt'rok'ayán
Excuse me for asking so many questions. How does it happen that there is such a large number of hydro-electric plants in Armenia?	Ներողութիւն այսքան հարցուփորձիս համար։ Ինչի՞ հետեւանք է, որ Հայաստանում այդքան մեծ թուով ջրելեքտրօկայաններ կան։	

Mr. Aramian

coal	քարածուխ	karac'úx
oil	քարիւղ	karyúq
cheap	աժան	ažán
down (a mountain)	լեռնիվայր	lernivâyr
flow	հոսել	hosél
natural	բնական	bənak'án

strength, energy	ույժ, ուժ	úyž, úž
to provide	մատակարարել	mat'ak'ararél
electric plant	ելեկտրոկայան	yelekt'rok'ayán
That's quite clear.	Ահ, դա շատ պարզ է։	
Water is cheaper than coal.	Ջուրը քարածուխից աւելի աժան է։	
And the rivers of Armenia, flowing down from the mountains, provide natural energy for factories and power plants.	Իսկ Հայաստանի լեռնիվայր հոսող գետերը, արդէն բնական մեծ ույժ են մատակարարում գործարաններին ու ելեկտրոկայաններին։	

B. Build-ups

(Use present participle 2 or past participle 2 wherever possible.)

1. a. It's in the foreign industry section of the paper.
   b. You must read these two important articles.
   c. The articles are in the foreign industry section.
   d. You must read the two articles which are in the foreign industry section.
   (Արտաքին ճարտարարուեստի բաժնում գտնուող այդ երկու կարեւոր յօդուածները)

2. a. The article gives lots of data.
   b. The article gives lots of data about industry.
   c. The article gives lots of data about Armenian industry.
   d. You will get a complete idea from this article, which gives lots of data about Armenian industry.
   (Հայաստանի ճարտարարուեստի մասին շատ տուեալներ տուող յօդուածից)

3. a. He didn't talk about economic problems.
   b. He is concerned with political problems.
   c. We are concerned with purely political problems.
   d. Because of being concerned with purely political problems, he didn't talk about economic problems.
   (Զուտ քաղաքական խնդիրներով զբաղուած լինելու պատճառով)

4. a. Armenian industry is developing gradually.
   b. I don't understand the industries of Armenia.

c. I don't understand the developing industries of Armenia.

d. In order to understand the gradually developing industries of Armenia, you must go there in person.
(Գնալով զարգացող Հայաստանի ճարտարարուեստը հասկանալու համար)

5. a. The mines are famous in the Soviet Union.
   b. The metal deposits are famous in the Soviet Union.
   c. The mines located in Armenia are famous in the Soviet Union.
   d. The mines located in the southern part of Armenia are famous in the Soviet Union.
   (Հայաստանի հարաւային մասում գտնուող մետաղային հանքերը)

6. a. There are a lot of fish in these rivers.
   b. There are a lot of fish in the rivers of Armenia.
   c. There are a lot of fish in the rivers which flow down from the mountains.
   (Հայաստանի լեռնիվար հոսող գեղեցիկ գետերում)

7. a. He's a correspondent.
   b. He's an American correspondent.
   c. He's one of the American correspondents interested in Armenia.

d. He's one of the American correspondents interested in the new industry of Armenia.
(Հայաստանի նոր ճարտարարուեստով հետաքրքրուող ամերիկեան լրագրողներից մէկը)

8. a. I read the Times.
   b. I read today's Times.
   c. I read today's Times very carefully.
   d. After reading today's Times very carefully, I wrote a letter.
   («Նիւ-Եօրք Թայմզ»-ը այսօրուայ համարում ուշադրութեամբ կարդալուց յետոյ)

9. a. I was talking with my friends.
   b. I was talking with my friends about Armenia.
   c. I was talking with my friends about Armenia until 2 a.m.
   d. On account of talking with my friends about Armenia until 2 a.m., I'm very tired today.
   (Մինչեւ ժամի տասերկուսը իմ բարեկամի հետ Հայաստանի մասին խօսելու պատճառով)

10. a. I want to buy some synthetic rubber.
    b. He bought some synthetic rubber exported from Armenia.
    c. In order to buy synthetic rubber exported from Armenia, you must speak to our director.
    (Հայաստանից արտածած արհեստական ձգախէժ գնելու համար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը միշտ էլ ճանաչուել է որպէս մի գիւղատնտեսական երկիր, բայց վերջին քսան տարիների ընթացքում, ճարտարարուեստը այնքան է յառաջադիմել, որ այսօր Խորհրդային Միութեան մէջ, արդիւնաբերութեան բնագաւառում, Հայաստանը տնտեսապէս զարգացած հանրապետութիւններից մէկն է համարւում: Բաւական է ի նկատի առնել այն փաստը, որ 1943 թուին, երկրի ընդհանուր արդիւնաբերութեան 80 տոկոսը ճարտարարուեստի միջոցով է եղել:

Ահա, ճարտարարուեստի այս արագ զարգացման հետեւանքով է, որ 1916–1939 թիւ, Հայաստանի քաղաքաբնակ բնակչութեան թիւը 220 տոկոսով աճել է:

Հայաստանի ճարտարարուեստի ծաւալման գլխաւոր ազդակները կայանում են երկրի բնական հարստութիւնների, հանքերի, ինչպէս նաեւ ելեքտրական ուժի մեծաքանակ օգտագործման ու հայթաթման մէջ:

ՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի հանքարգիւնաբերութեան մէջ առաջնակարգ տեղ են գրաւում գունաւոր մետաղներն ու քիմիական նիւթերը, որոնք շնորհիւ գիտական լայն միջոցների կիրառման, զարգացել ու ծաւալուել են: Այդ մետաղները երկրի տնտեսական վերելքի ու ճարտարարուեստի բարգաւաճման ողնայարն են հանդիսանում:

Հանքարդիւնաբերութեան մէջ, Հայաստանի գլխաւոր արտադրութիւնը պղինձն է, որն երբեմն ստացւում է արճիճի, ցինկի եւ այլ մետաղների հետ խառնուած վիճակում: Այս խառնուածքը օգտագործւում է քիմիագիտական վերլուծումների եւ մետաղագործութեան համար: Պղինձի, մետաղաձուլման եւ քիմիական նիւթերի արդիւնաբերութեան կարեւոր կենտրոններն են Ալլահվերդին ու Կիրովականը:

Հայաստանի պղինձի արտադրութիւնը զարգացաւ 19-րդ դարի կէսին, երբ երկրի հանքային արդիւնաբերութիւնն անցաւ ֆրանսիացիների ձեռքը: Հետագային, 1939–1940 թուերին, Հայաստանի կառավարութեան ջանքերով, նոր հետախուզութիւններ կատարուեցին եւ, պղինձի արտադրութիւնը 10 անգամով աւելի ծաւալուեց:

Հայաստանում կան նաեւ արճիճի, ցինկի, արծաթի, ոսկու, քրոմի, հանքեր: Գունաւոր մետաղները գտնւում են Զանգեզուրի շրջանում, իսկ երկաթի հանքերը տարածւում են հիւսիսում: Պաղլեղածինը (ալիւմինեոմ) արտադրւում է Քաջարանում:

Քարածուխը որ սկզբում Դոնեցի Աւազանից էր ներմուծւում, այսօր, շնորհիւ Ջաջուրում եւ Ջերմանիսում յայտնագործուած հանքերի, մատակարարում է երկրի ներքին պէտքերը:

Տեղական սպառողական նշանակութիւն ունի բասարգեչարի, կալինինի եւ կիրովականի շրջանների հողածուխը (տորֆ):

Հայաստանը հարուստ է, յատկապէս շինարարական նիւթերոկ: Երկիրը լեցուն է զանազան մարմարների, փխրաքարի (տուֆ), սեւակուճի (բասալտ), կրի, որձաքարի (գրանիթ) եւ նման շատ նիւթերի հանքային շերտերով:

Այս շինանիւթերը որոնք հրաբխային ծագում ունեն, գտնւում են Արագածի շրջապատում, փամբակ գետի աւազանում եւ Արարատեան դաշտավայրում: Մեծ կարեւորութիւն ունի Արթիկի հռչակաւոր վարդագոյն տուֆ քարը, որի պահեստը 60 միլիոն խորանարդ մեթր է: Տուֆը օգտագործւում է ոչ միայն Հայաստանի շինարարութեան համար, այլեւ արտածւում է խորհրդային միութեան այլ հանրապետութիւններին:

Գունաւոր երակներով մարմարը գտնւում է Աղվերանում, Արզակում եւ Դավալույում:

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի օրստօրէ ընդարձակուող ճարտարարուեստը պատճառ է դարձել երկրում գործարանային ցանցերի կազմութեան: Արտադրականութեան այս աննախընթաց վերելքի հիմնական դրդապատճառը հայ ժողովրդի ձեռներէցութեան ու աշխատասիրութեան պիտի վերագրել: Քաղաքական ազատ պայմաններում, երբ վերստացուի Հայաստանի կատարեալ անկախութիւնն եւ հողային արդար իրաւունքները, հայ ժողովուրդը հրաշքներ կարող է գործել:

Ներկայ Հայաստանում, գործարանային արտադրութեան ճնշիչ մասը ծանր ճարտարարուեստի վրայ է կենտրոնացած: 1948 թուին, երկրի ճարտարարուեստին յատկացուած ընդհանուր նախահաշիւն էր 4·1 միլիարդ ռուբլի: Այս գումարի 50 տոկոսը ուղղուած էր գործարանային ու բարդ մեքենաների շինման համար:

1940 թուին, խոշոր ճարտարարուեստի արտադրութիւնը 23 անգամ աւելին էր քան 1913 թուինը: Իսկ 1948 թուի արտադրականութիւնը 60 անգամով գերակշռում էր 1927–28 թուերի ընդհանուր արդիւնքին:

Համաշխարային Երկրորդ Պատերազմից յետոյ, Հայաստանում զարգացաւ մեքենաշինութիւնը, որը կազմում է ընդհանուր ճարտարարուեստի մէկ հինգերորդ մասը:

Հայաստանի կենտրոնական շրջանի գործարաններում պատրաստւում են ելեքտրականութեան վերաբերող կազմածներ, մեքենաների մասեր ու գործիքներ, ինչպէս նաեւ ճարտարարուեստային քիմիական նիւթեր: Արտադրւում է ծծմբաթթու, կարբիտ եւ այլն: Շիրակը համարւում է թանկարժէք շինարարական նիւթերի արդիւնաբերութեան շրջան:

Արհեստական ձգախէժի արտադրութիւնը յատուկ կարեւորութիւն ունի ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ համայն խորհրդային Միութեան մէջ: Արհեստական ձգախէժից պատրաստւում է ինքնաշարժի անիւներ, գործարանային պիտոյքներ ու տնային առարկաներ:

Հայաստանի հիւսուածեղէնի գործարանները ներքին պէտքերը հոգալուց զատ, կարողանում են նաեւ որոշ քանակով արտածել հարեւան երկրներին: Լենինականը եւ Շիրակը յայտնի են որպէս հիւսուածեղէնի կենտրոններ, իսկ Կիրովականը որպէս գործուածեղէնի: Երեւանում կան հագուստեղէնի, մահուդի, կաշուի, կօշիկի եւ այլ պիտանի նիւթերի ու ապրանքների գործարաններ: Մետաղագործութեան ճարտարարուեստը գտնւում է Նոր Մալաթիայում:

Հետզհետէ զարգանում է նաեւ կրաղիւսի, ապակու, օճառի, ծխախոտի եւ բամբակի արտադրութիւնը:

Հայաստանում նշանակալից տեղ է բռնում կենսամթերքին կապուող ճարտարարուեստը: Լոռիի շրջանում, շնորհիւ ալպեան լեռնային արօտատեղիների ու գործադրուած արդիական միջոցների, մեծ զարկ է ստացել անասնապահութիւնն ու կաթնարդիւնաբերութիւնը: Կան պահածոյի, անուշեղէնի, պանիրի, գինու եւ բարձրորակ կոնեակի գործարաններ: 1946 թուից, Սպիտակում աշխատում է շաքարի գործարանը:

Կենսամթերքի ճարտարարուեստացման հետեւանքով, արդիական հիմքերի վրայ է դրուել մսի, ճարպի եւ ալիւրաղացութեան արդիւնաբերութիւնը:

ՋՐԵԼԵՔՏՐՕԿԱՅԱՆՆԵՐ

Հայաստանի ճարտարարուեստի զարգացման, մեծապէս նպաստում են ջրելեքտրօկայանները: Երկրի բնական դիրքը եւ լեռնիվայր հոսող արագընթաց գետերը, հրաշալի միջոց են հանդիսացել մատչելի ելեքտրոյժի հայթայթման խնդրում:

Այսօր, Հայաստանի բոլոր քաղաքներն, աւաններն ու անգամ գիւղերը օժտուած են ելեքտրական լոյսի լայն յարմարութիւններով: Երկրի ներքին կարիքներին ծառայելուց բացի, Հայաստանի ջրելեքտրոկայանները ելեքտրականութիւն են մատակարարում նաեւ հարեւան հանրապետութիւններին:

Մինչեւ 1940 թիւ, Հայաստանում գոյութիւն ունէին 40 հատ ջրելեքտրոկայաններ: Իսկ 1948 թուին, այդ թիւը 50 տոկոսով աւելացաւ: Խորհրդային վիճակագրական տուեալների համաձայն, 1950 թուին, Հայաստանի ելեքտրականութեան արտադրողական կարողութիւնն էր տարեկան 860 միլիոն կիլովաթ ժամ: Իսկ ջրելեքտրոկայանների ընդհանուր ներուժ կարողականութիւնն է տարեկան 7 միլիարդ կիլովաթ ժամ:

Ամենախոշոր ջրելեքտրոկայանները կառուցուած են Հրազդան գետի վրայ, որոնցից յայտնիներն են Քանաքեռի եւ Սեւան Լճի կայանները: 1950 թուից ի վեր կառուցւում է Գիւմիւշի հսկայ կայանը:

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երկաթուղային ցանցից բացի, Հայաստանի փոխադրական այլ միջոցները անբաւարար են արդիւնաբերային լայն նպատակների համար: Նախ, ներկայ Խորհրդային Հայաստանը նաւահանգիստ չունի, ապա, աննաւարկելի ու արագահոս գետերը որեւէ կերպ չեն ծառայում փոխադրութեան գործին: Իսկ երկրի խճուղիները առայժմ չունեն արդիական կատարեալ յարմարութիւններ:

Թէ փոխադրական եւ թէ ռազմագիտական տեսակէտից, Հայաստանի երկաթուղագիծը կարեւոր դեր է կատարում հարաւային Կովկասում: Քանի որ, նա, Խորհրդային Երկիրը Միջին Արեւելքին ու Փոքր Ասիային միացնող օղակն է հանդիսանում:

Հիւսիսում, Հայաստանի երկաթուղին անցնելով Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի միջով, շարունակում է դէպի հիւսիս-արեւմուտք, Սեւ Ծովի նաւահանգիստները միացնելով Կասպից Ծովի հետ: Իսկ մի երկրորդ գիծ, բաժանուելով Լենինականի հարաւում, միանում է Կարսին, որով եւ կապւում է Թուրքիայի մայրաքաղաք Անքարային եւ Կոստանդինապոլսին:

Հայաստանի երկաթուղագծի հարաւային ճիւղը, անցնելով Երեւանի միջից, առաջանում է հարաւ մինչեւ Նախիջեւան, ապա մտնելով Պարսկաստան, Թաւրիզի ու Թէհրանի գծով միանում է Պարսից Ծոցին:

1. A and B, who are employed by an American governmental agency, inquire of C, who has just arrived from Armenia, about the present state of industry there.

2. D, who represents the chamber of commerce of a western state, tries to interest a business man in moving to his state. The business man inquires

about the resources of the state, etc.

3. F and G are riding together on a train which is passing through an industrial section. F, who is a stranger to the area, asks G, who lives nearby, about the factories he sees. G answers, and volunteers other information about the area.

LESSON 27

AGRICULTURE

A. Basic Sentences

Mr. Smith

to bore	ձանձրացնել	janjəracənél
information	տեղեկութիւն	t'eqek'utyún
If I'm not boring you, Mr. Aramian, I wish you'd tell me a few things about Armenian agriculture.	Պարոն Արամեան, եթէ ձեզ չեմ ձանձրացնում, խնդրում եմ, մի քանի տեղեկութիւններ տաք Հայաստանի գիւղատնտեսութեան մասին:	

Mr. Aramian

love	սէր	sér
Gladly. What kind of questions do you have?	Սիրով: Ինչպիսի՞ հարցեր են ձեզ հետաքրքրում:	

Mr. Smith

to concern, to relate to	վերաբերել	veraberél
Oh, in general, agricultural questions relating to present-day Soviet Armenia.	Ընդհանրապէս, ներկայ Սովետական Հայաստանի գիւղատնտեսութեան վերաբերող հարցեր:	

Mr. Aramian

to be conditioned	պայմանաւորուել	p'aymanavorvél
The agriculture of present-day Armenia is conditioned by its geographical position.	Ներկայ Հայաստանի գիւղատնտեսութիւնը պայմանաւորուած է իր աշխարհագրական դիրքով:	

	Mr. Smith	
How do you mean?	Ներողութիւն, ի՞նչպէս հասկանալ այդ։	
	Mr. Aramian	
to be divided	բաժանուել	bažanvél
vegetable (adj.)	բուսական	busak'án
belt	գօտի	got'í
Let me explain. Armenia is a mountainous country, divided into zones according to vegetation.	Բացատրեմ։ Հայաստանը լեռնային երկիր է, եւ բաժանուած է տարբեր բուսական գօտիների։	
	Mr. Smith	
What is grown on the Plain of Ararat?	Ի՞նչ է մշակւում Արարատեան դաշտում։	
	Mr. Aramian	
as a result	շնորհիւ	šənorhív
cotton	բամբակ	bambák'
almost	համարեա	hamaryá
Because of its hot summers, it produces grapes, cotton, and almost all kinds of fruit.	Արարատեան Դաշտը շնորհիւ իր ամառային տաքերին, տալիս է խաղող, բամբակ եւ մրգերի համարեա բոլոր տեսակները։	
	Mr. Smith	
popular, famous	յարգի	hargí
I hear that Armenian tobacco is very popular.	Լսել եմ, որ Հայաստանի ծխախոտը շատ յարգի է։	

Mr. Aramian

tobacco industry	ծխախոտագործութիւն	c’əxaxot’agorc’utyún
semi-mountainous	կիսալեռնային	kisaleřnaín
n Armenia, activity in the tobacco industry is mainly in the semi-mountainous regions.	Հայաստանում, ծխախոտագործութեամբ են զբաղւում գլխաւորապէս կիսալեռնային շրջաններում:	

Mr. Smith

grain	հացահատիկ	hacahat’ík’
to be planted	ցանուել	canvél
nd what areas do they raise grain in?	իսկ հացահատիկները ո՞ր շրջաններում են ցանւում:	

Mr. Aramian

n the mountainous and semi-mountainous areas.	Լեռնային եւ կիսալեռնային շրջաններում:	

Mr. Smith

animal husbandry	անասնապահութիւն	anasnap’ahutyún
ow, please tell me a little about animal husbandry.	Հիմա խնդրում եմ, մի քանի խօսք ասէք անասնապահութեան մասին:	

Mr. Aramian

pleasure	հաճոյք	hač’úyк
trans-Caucasia	Անդրկովկաս	andərk’ofk’ás
alpine	ալպեան	alp’yán
pasture	արօտավայր	arot’aváyr

With pleasure. In all trans-Caucasia, Armenia leads with respect to its splendid Alpine pastures.	Հաճույքով: Ամբողջ Անդրկովկասում Հայաստանը առաջինն է իր ալպեան սքանչելի արօտավայրերով:	

Mr. Smith

I know the pastures of the Aragats Mountains.	Գիտեմ Արագածի արօտավայրերը:	

Mr. Aramian

other	այլ	áyl
soil	հող	hóq
fertile	բերրի	berrí
True; there are not only the Aragats Mountains, but other mountain regions where the soil is fertile.	Ճիշտ է: Բայց ոչ միայն Արագածը, կան նաեւ այլ լեռնային շրջաններ ուր հողը շատ բերրի է:	

Mr. Smith

One more question and let's quit.	Մի հարց եւս եւ վերջացնենք:	
domesticated	ընտանի	ənt'aní
living	կենդանի	k'entaní
What are the main domesticated animals raised in Armenia?	Ընտանի կենդանիների ո՞ր տեսակներն են աւելի շատ պահւում Հայաստանում:	

Mr. Aramian

cow	կով	k'óv
goat	այծ	áyc'
sheep	ոչխար	vočxár

cheese	պանիր	p'anír
of a special kind	իւրայատուկ	yurahat'úk'
to produce	արտադրել	art'adərél
Cattle, goats, and sheep. Armenia produces a kind of cheese which is unique.	Կով, այծ եւ ոչխար։ Հայաստանը արտադրում է պանիրի մի տեսակը, որը իւրայատուկ է։	

Mr. Smith

Thank you.	Շնորհակալութիւն։	

Mr. Aramian

lecture	դասախօսութիւն	dasaxoxutyún
I hope I didn't deliver a lecture.	Կարծում եմ առանձին դասախօսութիւն չկարդացի ձեզ համար։	

B. Build-ups

1. a. My question bears on Armenia.
   b. My question concerns present-day Armenian agriculture.
   c. I have lots of questions.
   d. I have lots of questions concerning the agriculture of present-day Armenia.
   (Ներկայ Հայաստանի գիւղատնտեսութեան վերաբերող)

2. a. Agricultural production is conditioned by geographical location.
   b. The geographical location was described by our teacher.
   c. Agricultural production is very important.
   d. The agricultural production conditioned by the factors which our teacher described is very important.
   (Մեր ուսուցիչի նկարագրած, աշխարհագրական դիրքով պայմանաւորուած)

3. a. It is an important grain.
   b. Grains are grown on the Plain of Ararat.
   c. It is one of the most important grains.
   d. It is one of the most important grains cultivated on the Plain of Ararat.

   (Արարատեան Դաշտում մշակուող ամենակարեւոր հացահատիկներից)

4. a. I was bored with all those data.
   b. I was bored with all those data on agricultural problems.
   c. I didn't stay.
   d. Because I was bored with all those data on agricultural problems, I didn't stay.

   (Այդ բոլոր տուեալներից ձանձրանալուս չետեւանքով)

5. a. I went to Armenia.
   b. I saw the fertile fields of Armenia.
   c. I decided to stay in Armenia.
   d. After going to Armenia and seeing the fertile fields of that country, I decided to stay there.

   (Հայաստանը այցելելուց և Հայաստանի բերրի հողերը տեսնելուց յետոյ)

6. a. He's busy cultivating his peaches.
   b. He's busy every day in the orchard.
   c. The sick farmer had to go to the hospital.
   d. The sick farmer, busy in the fields every day

cultivating his peaches, must go to the hospital.

(Ամէն օր իր այգում դեղձ մշակելով զբաղուած Հիւանդ այգեգործը)

7. a. You'll understand everything.
   b. You'll understand everything after listening to his lecture.
   c. You must listen to his lecture very carefully.
   d. After listening very carefully to the lecture which our teacher is to deliver, you will understand it all.

   (Մեր ուսուցիչի կարդալիք հեռաքրքիր դասախօսութիւնը մեծ ուշադրութեամբ լսելուց յետոյ)

8. a. The sum of money was sent to my brother.
   b. The sum was sent to my younger brother by my father.
   c. I myself didn't send my brother any money.
   d. On account of hearing about the large sum sent to my younger brother by my father, I myself didn't send my brother any money.

   (Հօրս կողմից փոքր եղբօրս ուղարկուած մեծ գումարի մասին լսելուս հետեւանքով)

9. a. These business matters are very important.
   b. The business affairs conducted by that man are very important.
   c. That man is occupied by foreign drafts.

d. The business conducted by the man occupied with foreign drafts is very important.

(Առաջին մուրհակներով զբաղուած մարդու կարգադրած առեւտրական գործերը)

10. a. I have to go right now.
    b. I don't have time to get a ticket.
    c. I don't have time to invite my friend who lives across from me.
    d. In order to have time to get a ticket and invite the friend who lives across from me, I have to go right now.

(Տոմս ճարելու և դիմացը ապրող բարեկամիս հրաւիրելու համար, ժամանակ ունենալու համար)

C. Reading

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

(Ընդհանուր ակնարկ)

1. Տեղագրական պայմաններ եւ բուսականութիւն

Սովետական Հայաստանն ընդհանրապէս լեռնային երկիր է։ Երկրի մակերեսը շատ կտրտուած է և բարդ կազմութիւն ունի։ Տեղագրական այդպիսի պայմանների պատճառով էլ, Հայաստանի բուսականութիւնը բազմազան է։ Բուսանութեան այս կամ այն տեսակների աճումը ծագում է, տուեալ շրջանի աշխարհագրական դիրքից, կլիմայական պայմաններից և մթնոլորտային տեղումներից։

Սակայն, ընդհանուր երեւոյթ է, որ Սովետական Հայաստանի բուսականութեան տարբեր տեսակներն ուղղահայեաց դասաւորում ունեն։ Այսինքն, ինչքան տուեալ հողային գօտին ծովի մակերեսից քիչ վեր է, այնքան նրա բուսականութեան տեսակը տարբեր է իրենից վեր գտնուող գօտու բուսականութիւնից։ Այդ ձեւով, եթէ մտքով Արարատեան Դաշտից մի գիծ անցկացնելու լինենք մինչեւ Արագած լեռան ձիւնապատ գագաթը, այդ գծի ամենաներքեւի մասում կը լինեն բրինձի և բամբակի արտեր։ Յետոյ, դէպի վեր խաղողի այգիներ։ Յետոյ պտղատու ծառերի այգիներ։ Աւելի վեր, ծխախոտի, ցորենի և գարու ցանքեր։ Էլ աւելի վեր, խոտհարքեր և մարգագետիններ։ Նոյն երեւոյթն է, Արարատեան Դաշտից վեր, դէպի Գեղամայ լեռները։

2. Անասնապահութիւն

Սովետական Հայաստանի ամբողջ հողային տարածութեան քառասունհինգ տոկոսը կազմում են խոտհարքները և ալպեան մարգագետինները։ Այդ ձեւով Հայաստանը համարեա կէս առ-կէս անասնապահական երկիր է: Եւ իրապէս երկրի գիւղատնտեսութեան ամբողջ արտադրանքի եկամուտի քսանութ տոկոսն ստացւում է անասնապահութիւնից:

Ընտանի կենդանիների տեսակներից, Հայաստանում պահւում են, ոչխար, այծ և խոշոր եղջիւրաւոր անասուններ:

Երկիրն արտադրում է, իւղ, պանիր, բուրդ և միս:

Զարգացած է նաեւ խոզաբծութիւնը:

3· Հացահատիկներ

Հացահատիկներից Հայաստանում ցանւում են, գլխաւորապէս, ցորեն, գարի և վարսակ: Հացահատիկների մշակոյթով են զբաղւում երկրի, համարեա, բոլոր շրջաններում: Հացահատիկների մշակոյթը տեղական բնոյթ է կրում:

4· Ճակնդեղ

Ճակնդեղը ցանւում է Շիրակի Դաշտում միայն շաքար պատրաստելու համար: Հայկական ճակնդեղը տասնութից-քսան տոկոս շաքարայնութիւն ունի:

5· Պտուղներ

Հայաստանը զանազան պտուղների երկիր է: Ծառապտուղներից լաւագոյններն են, հայկական դեղձը, ծիրանը և սալորը: Հայաստանում պատրաստուած, դեղձի, ծիրանի և այլ պտուղների պահածոները մեծ հռչակ ունեն, որպէս ընտիր տեսակներ:

6· Բանջարեղէններ

Հայաստանը, նոյնպէս, բանջարեղէնների երկիր է: Մշակւում են բանջարեղէնների, համարեա, բոլոր տեսակները, ինչպէս և սեխ ու ձմերուկ:

7· Խաղող

Խաղողը Հայաստանի պատմական գիւղատնտեսական մշակոյթներից մէկն է:

Ըստ աւանդութեան, երբ Նոյ Նահապետը ջրհեղեղից յետոյ Արարատի կատարից Արարատեան Դաշտ իջաւ, խաղողի հիւթ խմեց և շատ հաւանելով ասաց, — „Սա գին ունի„: Այդտեղից էլ առաջացաւ գինի բառը:

Խաղողից, Հայաստանում, պատրաստւում են մի քանի տեսակի լաւորակ գինիներ, ինչպէս եւ կոնեակ (»Արարատ»), որը հռչակաւոր է նաեւ արտասահմանում:

Խաղողը մշակւում է Արարատեան Դաշտում և նրան յարակից կիսալեռնային շրջաններում: Հայաստանի մայրաքաղաք, Երեւանը, շրջապատուած է խաղողի լայնատարած այգիներով և դեղձի ու ծիրանի ծառաստաններով:

8· Ծխախոտ

Ամբողջ Սովետական Միութեան մէջ յայտնի է հայկական ծխախոտը („Սամսոն" և „Տրապիզոն" տեսակները):

Ծխախոտագործութիւնը Հայաստանում գնալով մեծ զարկ է ստանում: Այժմ Հայաստանի երեսունվեց շրջաններից քսաներեքը պարապում է ծխախոտագործութեամբ:

9· Բամբակ

Բամբակագործութիւնը Հայաստանի գիւղատնտեսութեան ամենակարեւոր ճիւղերից մէկն է հանդիսանում: Բամբակը մշակւում է գլխաւորապէս Արարատեան Դաշտում, բայց այժմ, շնորհիւ արհեստական ոռոգումներին, նրա տարածութիւնը գնալով լայնանում է:

10· Բրինձ

Բրինձը ցանւում է Հայաստանի տաք շրջաններում, գլխաւորապէս գետեզերքներին: Բրինձի արտադրութիւնը մեծ չէ:

11· Մերձարեւադարձային մշակոյթներ

Մեղրիի շրջանում, Արարատեան Դաշտում և ցուրտ քամիներից ծածկուած այլ վայրերում մշակւում են նաեւ բուսական մերձարեւադարձային մի քանի տեսակները: Դրանցից են, թուզը, նուշը, նուռը և այլն:

12· Թռչնաբուծութիւն

Ընտանի թռչուններից Հայաստանում պահում են, հաւ, բադ, սագ և հնդկահաւ: Թռչնաբուծութիւնը տեղական բնոյթ է կրում:

13· Շերամ

Երկրի թթենիների ընդարձակ ծառաստանները հնարաւորութիւն են ստեղծում շերամապահութեամբ զբաղուելու համար: Շերամապահութիւնը գնալով զարգանում է:

14· Մեղուաբուծութիւն

Շնորհիւ բուսական տարբեր գօտիների գոյութեանը, բամբակի արտերի լայն տարածութիւններին,

Հայաստանում փեթակները շատ առատ և առաջնակարգ մեղր են տալիս: Մեղուաբուծությունը զարգացած է լեռնային շրջաններում, առանձնապես Վայոց-Ձոր

D. Conversation

1. A has been reading about Armenian agriculture. He gives B a summary of what he has read. B asks for more details on points that interest him. Where A cannot remember details, he looks them up.
2. C is familiar with an agricultural region in which D is interested. D explains to C the nature of his interest, and then proceeds to interrogate him about the region.
3. E, who is F's twelve-year-old child, asks F wh various kinds of agricultural products come fr F answers as best he can.

LESSON 28

ARMENIAN LITERATURE

A. Basic Sentences

Mr. Smith

Were you at yesterday’s lecture?	Անցեալ օրուայ դասախօսութեան ներկայ եղա՞ք:	

Mr. Aramian

Unfortunately not. I was very busy. What was it all about?	Դժբախտաբար ոչ: Շատ զբաղուած էի: ինչի՞ մասին էր:	

Mr. Smith

contemporary	ժամանակակից	Žamanak’ak’íc
literature	գրականութիւն	gərak’anutyún
It was about contemporary Armenian literature.	Հայ ժամանակակից գրականութեան մասին:	
endless	անչափ	ančáp
It was exceedingly interesting.	Անչափ հետաքրքիր էր:	

Mr. Aramian

alas	ափսոս	apsós
to organize	կազմակերպել	k’azmak’erp’él
Too bad! Every time there is an interesting lecture, I’m absent.	Ափսոս: Ամէն անգամ, երբ մի հետաքրքիր դասախօսութիւն է կազմակերպւում, ես բացակայ եմ լինում:	

Mr. Smith

quite, rather	լաւապէս	lavap'és
But from what I know of you, you're quite familiar with Armenian literature.	Բայց որչափ գիտեմ, դուք լաւապէս ծանօթ էք հայ գրականութեանը։	
same	միեւնոյն	mievnúyn
It wouldn't have mattered.	Միեւնոյնն է։	
repetition	կրկնողութիւն	k'ərk'ənoqutyún
The lecture would have been a repetition.	Այդ նիւթը ձեզ համար կրկնողութիւն պիտի լինէր։	

Mr. Aramian

On the contrary, my friend.	Ընդհակառակը բարեկամ։	
to penetrate	խորանալ	xoranál
art	արուեստ	arvést'
science	գիտութիւն	git'utyún
requirement, need	պահանջ	p'ahánǰ
The more a man studies and penetrates science and the arts, the more he feels the need to know more.	Մարդ որչափ որ սովորում եւ խորանում է արուեստների ու գիտութեան մէջ, նոյնչափ պահանջ է զգում աւելին գիտնալու։	
summary	ամփոփ	ampóp
fashion, form	կերպ	k'érp'
to stress	անդրադառնալ	andradar̃nál
lecturer	դասախօս	dasaxós

Please tell me briefly what points the lecturer stressed most?	Խնդրում եմ, ամփոփ կերպով ասէք։ Ինչ՞ մասին աւելի շատ անդրադարձաւ դասախօսը։	
	Mr. Smith	
nest, origin	բուն	bún
to stop	կանգ առնել	k'àng aṙnél
era, period	դարաշրջան	darašərǰán
Before going on to the main subject, he spent considerable time on almost all the periods of Armenian literature.	Նախքան բուն նիւթին անցնելը, երկար կանգ առաւ Հայոց գրականութեան գրեթէ բոլոր դարաշրջանների վրայ։	
	Mr. Aramian	
Golden Age	Ոսկեդար	vosk'edár
Did he mention our Golden Age and its classics?	Արդեօք յիշե՞ց մեր Ոսկեդարը իր դասականներով։	
	Mr. Smith	
admiration	հիացմունք	hiacmúnk
Yes, yes, and with what admiration!	Այո, այո։ Եւ այն էլ ինչ հիացմունքով։	
	Mr. Aramian	
piece of work	երկ	yérk'
And what about Agathangelos, the first Armenian historical work?	Իսկ Ագաթանգեղոս հայ առաջին պատմական երկի մասին ինչպ՞էս։	

Mr. Smith

favorite	նախասիրած	naxasirác'
classic	դասական	dasak'án
Yes. His favorite classic authors are apparently Gregory of Narek and Nerses the Gifted.	Այո։ Բայց, ըստ երեւոյթին, իր նախասիրած դասականները Գրիգոր Նարեկացին եւ Ներսէս Շնորհալին են։	
analyze	վերլուծել	verluc'él
creative work	ստեղծագործութիւն	əst'eqc'agorc'utyún
He analyzed their works in detail.	Երկար վերլուծեց նրանց ստեղծագործութիւնները։	

Mr. Aramian

introduction	ծանօթութիւն	c'anotutyún
renaissance	վերածնունդ	verac'ənúnd
If he spent so much time on the introduction, surely he must have mentioned the great authors of the Armenian renaissance!	Եթէ այդքան մանրամասը ծանօթութիւններ է տուել, անպատճառ յիշել է նաեւ մեր վերածնունդի մեծ գրողներին։	

Mr. Smith

enthusiasm	ոգեւորութիւն	vokevorutyún
He spoke briefly but enthusiastically about the works of Alishan, Abovian, and other great writers of that period.	Թէեւ ամփոփ, բայց ոգեւորութեամբ խօսեց Ալիշանի, Աբովեանի եւ այդ շրջանի այլ մեծ գրողների մասին։	

Mr. Aramian

strange	զարմանալի	zarmanalí
main, basic	հիմնական	himnak'án
That's strange. After all that, did he find time to get to his main subject?	Զարմանալի բան։ Այս բոլորից յետոյ դասախօսը կարողացա՞ւ ժամանակ գտնել իր հիմնական նիւթին անցնելու։	

Mr. Smith

to endure, last	տեւել	t'evél
Yes. But don't forget that the lecture lasted almost three hours.	Այո։ Մի մոռացէք, որ դասախօսութիւնը գրեթէ երեք ժամ տեւեց։	

B. Build-ups

1. a. The lecture was about Armenian literature.
   b. I was present at a lecture every day.
   c. I learned a lot about Armenian writers.
   d. By being present every day at a lecture on Armenian literature, I learned a lot about Armenian writers.

   (Ամէն օր հայկական գրականութեան վերաբերող մի դասախօսութեան ներկայ գտնուելով, գրողների մասին)

2. a. I want to be present at those lectures.
   b. The lectures were arranged by our instructors.
   c. I went to the university at eight o'clock every day.
   d. In order to be present at the lectures arranged by our instructors, I went to the university at eight o'clock every day.

   (Մեր ուսուցիչների կազմակերպած դասախօսութիւններին ներկայ լինելու համար, գնացի)

3. a. The students are going deeply into the arts.
   b. The students are studying literature.

c. Your students are very interested in Armenian literature.

d. Your students, studying literature and penetrating more deeply into the arts, are interested in Armenian literature.

(Գրականութիւն սովորող և արուեստների մէջ խորացող ձեր ուսանողները)

4. a. In his lecture, he spoke about Armenian literature.

b. The lecturer stressed the work oi the most famous writers of the Golden Age.

c. The lecturer spoke for three hours.

d. Stressing in his lecture the most famous writers of the Armenian Golden Age, the lecturer spoke for three hours.

(Իր դասախօսութիւնում, հայոց գրականութեան ոսկեդարի ամենայայտնի գրողների մասին անդրադառնալով)

5. a. What is the material most important for your lecture?

b. He passed on to the most important part of his lecture.

c. I want to talk about the Golden Age.

d. Beiore passing to the material most important for my lecture, I want to talk about the Golden Age.

(Նախքան մի դասախօսութեան բուն նիւթին անցնելս)

6. a. He analyzed the works of the Armenian renaissance.
   b. He analyzed with great care the important works of the Armenian renaissance.
   c. His lecture was clear and accurate.
   d. If he had analyzed with greater care the important works of the Armenian renaissance, his lecture would have been clearer and more accurate.

      (Եթէ մեծ ուշադրութեամբ Հայոց գրականութեան վերածնունդի կարեւոր գործերը վերլուծէր [վերլուծելու լինէր])

7. a. I heard a lecture about Armenian literature.
   b. The lecture was delivered with great enthusiasm.
   c. I decided to learn Armenian.
   d. As a result of hearing an enthusiastically delivered lecture about Armenian literature, I decided to learn Armenian.

      (Հայոց գրականութեան մասին տուած մի դասախօսութիւն լսելուս պատճառով)

8. a. The analysis of these creative works is important.
   b. The analysis of the most important creative works of the Armenian renaissance is interesting.
   c. The lecturer approached the analysis of those creative works.

d. The lecturer approached the analysis of the most important and creative works of the Armenian renaissance.

(Հայկական վերածնունդի, գրական ամենակարեւոր ստեղծագործութիւնների վերլուծելուն)

9. a. One of the most famous Armenian creative works is Verk Hayastanin.
   b. One of the creative works of the Armenian renaissance is Verk Hayastanin.
   c. Verk Hayastanin was written in the period of the Armenian renaissance.
   d. One of the creative works written in the period of the Armenian renaissance is Verk Hayastanin.

(Հայկական վերածնունդի դարաշրջանին գրուած ստեղծագործութիւններից մէկը)

10. a. I wanted to know more about art.
    b. I felt the need to know more about art.
    c. I began to study Armenian.
    d. Because I felt the need to know more about Armenian art, I began to study Armenian.

(Հայ արուեստի մասին աւելին գիտնալու պահանջ զգալուս հետեւանքով)

C. Reading

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

Դարերի իր պատմութեան ընթացքին, հայ ժողովուրդը ստեղծել է բազմաթիւ դիւցազնավէպեր, առասպելներ, վիպերգեր, սիրերգեր, առակներ, առածներ, երգեր:

Ժողովրդական այդ հարուստ բանահիւսութիւնը հայոց գրականութեան պատմութեան մէջ կոչւում է գուսանական: Գուսանները հայ ժողովրդի ծոցից ելած անգրագէտ բանաստեղծներ էին, որոնք թափառելով քաղաքից-քաղաք, գիւղից-գիւղ երգում էին, նուագում և պատմում իրենց ստեղծագործութիւնները:

Հայ ամենահին դիւցազնավէպը, որ մօտ երեսուն դարերի պատմութիւն ունի, կոչւում է Հայկի կռիւը Բէլի հետ: Ըստ այդ վէպի, հայ ժողովրդի նախահայր Հայկ դիւցազն կռուեց բռնակալ Բէլի հետ, յաղթեց նրան և իր ժողովուրդն ազատեց ստրկութիւնից:

Հին գեղեցիկ վէպեր և վիպերգեր են նաեւ, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Տիգրան և Աժդահակ, Արտաշէս թագաւորը փախցնում է Սաթենիկ թագուհուն, Արտաշէսի և Սաթենիկի հարսանիքը, Արտաւազդի գահա-

վիժումը Մասիսի վիհը:

Հայ ժողովրդական, կամ գուսանական, բանահիւսութեան գլուխ գործոցն է հանդիսանում Սասունցի Դաւիթ դիւցազնավէպը, որը ստեղծուած է 9–10 դարերում: Սասունցի Դաւիթ–ը պատկերացնում է հայ ժողովրդի ազատագրական պայքարն արաբների տիրապետութեան դէմ Հայաստանում: Այդ հերոսավէպն իր մէջ պարունակում է, ազատասիրութեան, ճշմարտութեան, արդարադատութեան, մարդասիրական մարդկային բարձր գաղափարներ:

Բազմաթիւ առակների, հէքիաթների և առածների շարքին, խոշոր գեղարուեստական նշանակութիւն ունեն, աշխատանքի, սիրոյ, ռազմի, հարսանիքի, օրօրոցի, երգիծական և պանդուխտական բնոյթ կրող հայ ժողովրդական երգերը: Շատ են այդպէս կոչուած հայրենի երգերն, որոնց մէջ հայ գուսանները դրել են սիրոյ և կարօտի յոյզերը դիրելի հայրենիքը:

Բ· ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1· Արձանագրութիւններ

Հայոց հին գրականութեան նախօրինակներն են հանդիսանում բազմաթիւ ժայռերի և տափակ քարերի վրայ քանդակուած սեպագիր արձանագրութիւնները: Այդ արձանագրութիւնների ընթերցումը մեծ լոյս է սփռում հայոց, ինչպէս և ուրիշ ժողովուրդների նախնական պատմութիւնների ուսումնասիրութիւնների վրայ:

2· Հայ գրերի գիւտը

Մինչեւ 5–րդ դարի սկիզբը, հայ ժողովուրդն իր սեփական գիրը չունէր: Այդ հանգամանքը շատ էր ազդում ազգային գրական մշակոյթի զարգացման վրայ: Գրել յունական, կամ լատինական գրերով, հնարաւոր չէր, քանի որ այդ այբուբենները չէին պարունակում հայերէնի ճոխ հնչիւնների նշանները: Հայ ազգային այբուբենի խնդիրը շատ էր զբաղեցնում այդ ժամանակուայ հայ մտքի, քաղաքական և պետական մարդկանց: Դրանցից վառ հայրենասէր, մշակոյթի խոշոր գործիչ Մեսրոպ Մաշտոց–ին, 412 թուին, վերջապէս յաջողեց գծել հայոց ներկայ գրերը և դասաւորել այբուբենը: Մեսրոպեան այբուբենը հայ մշակոյթի խոշոր կոթողներից մէկն է հանդիսանում:

3· Հինգերորդ դարի գրականութիւն (Ոսկեդար)

Ա· Թարգմանութիւններ· Հայ այբուբենն անփոխարինելի ազդակ հանդիսացաւ հայ գրական մտքի արդիւնաւորմանը և հայ հարուստ գրականութեան զարգացման համար մինչեւ մեր օրերը:

Գրերի գիւտից անմիջապէս յետոյ հայերէնի թարգմանուեցին Աստուածաշունչը և կրօնական ուրիշ բազմաթիւ գրքեր:

Բ. *Առաջին հայ հեղինակներ*. Հայերէն տառերով առաջին անգամ ազգային ինքնուրոյն գրականութիւն ստեղծողներն են, *սուրբ Սահակ Պարթեւը*, սուրբ *Մեսրոպ Մաշտոցը* և *Եզնիկ Կողբեցին*:

Գ. *Պատմական գրականութիւն*. Հինգերորդ դարը հայ պատմագրութեան ամենից արդիւնաբեր դարն է համարւում: Այդ դարի հայ պատմիչներից, *Կորիւն Վարդապետ*-ը գրել է, *Վարք Մաշտոցի*: *Ագաթանգեղոս*-ը գրել է, *Պատմութիւն Հայոց*: *Փաւստոս Բիւզանդացի*-ն գրել է, *Պատմութիւն Հայոց*: *Եղիշէ*-ն աննման հայերէնով գրել է, *Պատմութիւն Վարդանանց*: *Ղազար Փարպեցին* գրել է, *Պատմութիւն Հայոց* և *Թուղթ առ Վահան Մամիկոնեան*: Եւ, վերջապէս, շատ անուն հանած, հայոց պատմագրութեան նախահայր համարւող, *Մովսէս Խորենացի*-ն գրել է իր հռչակաւոր, *Պատմութիւն Հայոց*-ը:

Հայ պատմագրութիւնը, որ շարունակուեց մինչեւ 18-րդ դարի վերջը ընդհուպ, միշտ էլ հայ հին և միջին դարերի գրականութեան կարեւոր մէկ ճիւղն է եղել: Հայ պատմիչների գործերը ընդհանրապէս գրուած են ընտիր հայերէնով: Լեցուն են գեղարուեստական պատկերներով և շարադրուած են, շատ անգամ, բանաստեղծական ոճով: Հայ պատմիչներից շատերի գործերը խոշոր նիւթ են մատակարարում համաշխարհային պատմութեան համար և թարգմանուած են մի շարք մշակոյթային լեզուներով:

Դ. *Աստուածաբանական գրականութիւն*. Հինգերորդ դարում, Քաղկեդոնի 451 թուի համաժողովից յետոյ, քրիստոնէական տիեզերական եկեղեցու մէջ, դաւանական մի քանի հարցերի շուրջը ճեղքուած առաջացաւ: Հայ եկեղեցու հայրերը, որ Վարդանանց Պատերազմի պատճառով չէին էլ մասնակցել Քաղկեդոնի ժողովին, մնացին պաշտպան հին աւանդութիւններին: Այնտեղից էլ սկսուեց աստուածաբանական-դաւանական գրականութիւն, որով երկար դարեր շարունակ զբաղուեցին հին շրջանի հայ գրողները:

Հինգերորդ դարի աստուածաբանական-դաւանական գրողներից նշանաւորն է *Յովհան Մանդակունի*-ն, որը գրել է իր *Ճառք* աշխատութիւնը:

Հինգերորդ դարի հայոց գրականութեան ոսկէդարն է համարւում գրական տեսակների իր ճոխ արդիւնքով և դասական հայերէնի (գրաբար) այլեւս այդքան մաքրօրէն չկրկնուող գործածումով:

4. Վեցերորդ դարի գրականութիւն

Վեցերորդ դարից սկսած, մինչեւ Բագրատունեանց անկախութիւնը, մինչեւ Կիլիկեան Հայաստանի շրջանը, հայոց գրականութիւնն այլեւս 5-րդ դարի ծաղկումը չունեցաւ։ Դրա պատճառը պէտք է փնտրել, իհարկէ, Հայաստանի այդ ժամանակուայ քաղաքական աննպաստ կացութեան մէջ։ Երկիրը սկզբում բաժանուած էր Պարսկաստանի և Բիւզանդիայի միջեւ։ Յետոյ էլ ընկաւ արաբական ծանր տիրապետութեան տակ։ Բայց և այնպէս գրականութիւն դեռ ստեղծւում էր։ Աւելի շատ աստուածաբանական—դաւանական գրականութիւն։

Վեցերորդ դարի մի շարք գրողների միջից նշանաւորն է Պետրոս Սիւնեցի-ն, կամ Քերթող-ը։ Նրա մի շարք բանաստեղծութիւններից բացի, շատ կարեւորն է Ներբող ի Բաբիկ Սիւնի գրական գործը, որը, դժբախտաբար իր ամբողջութեան մէջ կորած է։

5. Եօթերորդ դարի գրականութիւն

Ա. Աստուածաբանական—դաւանական գրականութիւն. Այդ նիւթի շուրջը գրողներից յայտնի է Յովհան Մայրագոմեցի-ն։

Անուն ունի նաեւ Թէոդորոս Կռթենաւոր-ը իր Ճառք գործով։ Այդ դարի աստուածաբանական գրականութեան մէջ աչքի է ընկնում Գիրք Թղթոց անհեղինակ ժողովածուն։

Բ. Բանաստեղծական գրականութիւն. Այդ դարի բանաստեղծներից, Կոմիտաս հայրապետը գրել է Անձինք նուիրեալք քնարերգութիւնը։ Դաւթակ Քերթողը գրել է Ողբք գեղեցիկ ողբերգուիւնը։

Գ. Իմաստասիրական գրականութիւն. Իմաստասէրներից Դաւիթ Անյաղթը գրել է Գիրք Սահմանաց, լուրջ գործը։ Անանիա Շիրակացի-ն տիեզերաբանութեան, թուաբանութեան և այլ նման խնդիրների շուրջը մի շարք աշխատասիրութիւններ։

Դ. Պատմական գրականութիւն. Եօթերորդ դարի հայ պատմիչներից առանձին տեղ է գրաւում Սեբէոսը։ Սեբէոսի Պատմութիւն Հայոց-ի վերջի մասերը, ուր նա գրում է 6-րդ դարում Հայաստանում կատարուած դէպքերի և առանձնապէս 7-րդ դարի արաբական գրաւումների մասին Հայաստանում ու այլուրեք, պատմական անզուգական փաստաթղթեր են հանդիսանում։

6. Ութերորդ դարի գրականութիւն

Այդ դարի պատմագիրներից նշանաւորն է Ղեւոնդ-ը իր Պատմութիւն Հայոց-ով։ Ղեւոնդը գրել է արաբների տիրապետութեան մասին Հայաստանում։ Նրանց ծրագրերի մասին, ջնջել հայ նախարարական տոհմերը և նկարագրել է հայկական ապստամբութիւնները, ընդդէմ օտար իշխողների:

Մինչեւ 13-րդ դարի վերջերը, հայ գրականութեան կարեւոր մէկ մասն է կազմել հոգեւոր բանաստեղծութիւնը: Գրական այդ ճիւղի զարգացումը, նախ պէտք է բացատրել խոր նուիրականութեամբ քրիստոնէական եկեղեցուն եւ երկրորդ, որպէս հոգեկան մխիթարութեան միջոց: Հոգեւոր բանաստեղծութիւնն իր լայն չափերով նաեւ հայ ժողովրդի պատմութեան ցաւատանջ առաջացման դէմ անդրադարձի քարոզչութեան միջոց է հանդիսացել: Հայ հոգեւոր բանաստեղծութիւնների ժողովածուն կոչւում Շարականոց: Շարականոցը բաժանուած է կանոնների կամ կարգերի: Ամէն մի կանոն բաղկացած է մի խումբ (մօտաւորապէս 8-9) հոգեւոր երգերից: Այդ երգերից, կամ բանաստեղծութիւններից ամէն մէկը կոչւում է շարական:

7. Բագրատունիների շրջանի գրականութիւն

Արաբների տիրապետութեան դէմ մղած երկարատեւ կռիւների ընթացքում վերջապէս, 9-րդ դարի վերջերին Հայաստանում հաստատուեց Բագրատունիների հայկական թագաւորութիւնը: Երկիրը բաւական ժամանակ խաղաղ ապրեց: Ծաղկեց տնտեսապէս և վերաշինուեց: Դրան զուգընթաց, այդ շրջանի, առանձնապէս 10-րդ դարի գրականութիւնը բաւական արդիւնաւոր եղաւ:

Ա. Իններորդ դարի գրականութիւն. Իններորդ դարի յայտնի է իր պատմիչներով, որոնք ապրել են և գրել նաեւ 10-րդ դարում:

Իններորդ դարում է ապրել և գրել Շապուհ Բագրատունի պատմիչը, որի Պատմութիւն Հայոց-ի ձեռագիր բնագիրը, դժբախտաբար կորել է: Վերջերս գտնուել է մի ձեռագիր, որի սկզբի և վերջի էջերը չկան և որը վերագրում են Շ. Բագրատունուն: Սակայն այդ ձեռագիրը պատմութիւն չէ, ճիշտ իմաստով, այլ պատմական վիպագրութիւն:

Բ. Տասերորդ դարի գրականութիւն. Այդ դարի պատմիչների աշխատանքներից արժէքաւոր է Յովհաննէս Դրասխանակերտցի հայրապետի Պատմութիւն Հայոց-ը: Նախարարական տան պատմագրութիւն է Թովմայ Արծրունու Պատմութիւն Տանն Արծրունեաց գործը:

Գ. Տաս-տասմէկերորդ դարերի գրականութիւն. Այդ շրջանին է գրել իր սքանչելի բանաստեղծութիւնները հայ գրականութեան պարծանք հանդիսացող Գրիգոր Նարեկացի-ն: Նարեկացին իրեն նուիրած է եղել Աստծուն, վարել է ասքէթական անբասիր կեանք, աղօթել է իր չգործած մեղքերի համար, ճգնել է և տառապել: Տառապել է, որովհետեւ ամբողջովին չի կարողացել իր մէջ լռեցնել տաք աշխարհիկ կեանքի գրաւիչ կանչը:

8• Կիլիկեան Հայաստանի շրջանի գրականութիւն

Այդ շրջանում հայոց գրականութիւնը նոր թափ է ստանում, բայց և ըսկսում է դասական հայերէնի (գրաբար) տեղատւութիւնը:

Ա• Տասներկուերորդ դարի գրականութիւն• Այդ դարի և ընդհանրապէս հայ հին գրականութեան կառկառուն բանաստեղծներից է Ներսէս Շնորհալի-ն, կամ Կլայեցի-ն: Շնորհալին ունեցաւ բանաստեղծ հետեւորդների մի ամբողջ շարան: Դրանցից առաջին է 12-րդ դարում Գրիգոր Տղայ հայրապետը:

Բ• Տասներեքերորդ դարի գրականութիւն• Այս դարը տասներկուսի նման շատ ճոխ գրականութիւն է տուել: Պատմիչներից, Վարդան Արեւելցի-ն գրել է Պատմութիւն Տիեզերական: Կիրակոս Գանձակեցի-ն գրել է Համառօտ պատմութիւն Հայոց: Գանձակեցու պատմութեան վերջի մասերը, որոնք վերաբերում են թաթար-մոնղոլական արշաւանքներին, պատմական անփոխարինելի փաստաթղթեր են հանդիսանում համաշխարհային պատմագրութեան համար:

Գ• ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մինչեւ 13-րդ դարը հայ գրականութեան լեզուն եղել է գրաբարը, կամ դասական հայերէնը: Տասներեքերորդ դարից սկսած գրաբարի կողքին առաջ է գալիս միջին հայերէնը, որը գրաբարեան ձեւերի խառնուրդ է եղել: Միջին հայերէնի որոշ ձեւափոխութիւններն են հանդիսանում այսօրուայ արեւմտահայերէն և արեւելահայերէն գրական բարբառները: Նոր հայերէնի տարբերութիւնը գրաբարից շատ մեծ է: Բայց միջին հայերէնի տարբերութիւնն այնքան էլ մեծ չէ:

Ասել միջին հայերէնի գրականութիւն, չի նշանակում գրականութիւն գրուած միայն միջին հայերէնով: Միջին հայերէնի գրականութիւնը, միջնադարի հայ գրականութիւն է, ստեղծուած նաեւ գրաբարով:

Ա. Պատմագրութիւն. Տասնչորսերորդ դարի պատմիչն է Մխիթար Այրիվանեցի-ն: Նրա Պատմութիւն Ժամանակագրական-ը հետաքրքրական է հայ պատմիչների իր ցանկով; ուր անուններ կան, որոնք անծանօթ են դեռ:

Բ. Քնարերգութիւն. Միջին դարերում հայ քնարերգութիւնը վառ ծաղկում է ունեցել: Այդ դարաշրջանի բազմաթիւ բանաստեղծներից աւելի շատ յայտիներն են Ֆրիկ (13-րդ դար), խաչատուր կեչառուեցի (14-րդ դար), Յովհաննէս Պլուզ (14), կոստանդին Երզնկացի (14), Մկրտիչ Նաղաշ (14-15), Առաքել Սիւնեցի (15), Յովհաննէս Թլկուրանցի (15), Գրիգոր Աղթամարցի (15-16), Նահապետ Քուչակ (16), Նաղաշ Յովնաթան (17-18), Բաղդասար Դպիր

(18), Սայաթ-Նովա (18): Այդ բոլոր բանաստեղծների երգերը, աւել կամ պակաս չափով արտայայտում են կեանքի դառնութիւն, հայրենիքի սէր, գարուն, սէր, երգ, գինի, ձգտում զուարճունքի: Հայ այդ գրողների մասին, ռուս յայտնի բանաստեղծ և բանասէր Վալերիյ Բրիւսովն ասել է Միջնադարի հայ բանաստեղծութիւնը մարդկային ոգու այն սքանչելի յաղթանակներից մէկն է, որոնց մասին դիտի համաշխարհային տարեգրութիւնը:

Դ. ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց նոր գրականութիւնն սկսուել է 19-րդ դարի կէսերին: Այն բաժանւում է, ա. Ընդհանուր գրականութեան, բ. Սովետական Հայաստանի գրականութեան և գ. Սփիւռքահայ կամ տարագիր հայութեան գրականութեան:

Հայոց նոր գրականութիւնը հին և միջին գրականութիւններից տարբերւում է նախ իր լեզուական նորութեամբ: Յետոյ, իր զուտ աշխարհիկ բովանդակութեամբ և աւելի կատարելագործուած հայրենասիրութեամբ:

Արդի հայ գրականութեան լեզուն նոյն է, ինչ գրաբարում կամ միջին հայերէնում, միայն փոխուած հոլովներով և խոնարհումներով: Նոր հայերէնն ունի արեւմտեան ու արեւելեան գրական բարբառներ, որոնք արդիւնք են Հայաստանի պատմական-քաղաքական կացութեանը: Գրական այդ երկու բարբառների տարբերութիւնը շատ չնչին է և ընդհանրապէս նրանք ներշնչուած են միաձուլման ձգտումով:

Ա. Նոր ընդհանուր գրականութիւն. Նոր հայերէնը մի օրում չի ստեղծուել: Այն շարունակութիւնն է միջին հայերէնի, իր ժամանակին ընդհատուած գրաբարասէրների խանգարումով: Բայց նորից նոր հայերէնը միջին հայերէնը չէ, այլ նրա, իր ընթացքի մէջ, կատարելագործուող ձեւը և օտար բառերից զտուած տարրը: Այստեղից էլ պարզ է, որ նոր հայերէնը իր սկզբնական շրջանում այն չէր, ինչպէս որ է հիմա: Եւ, որովհետեւ այդ այդպէս է, հայոց նոր գրականութեան առաջին գրողների լեզուն աւելի շատ բարբառային բնոյթ է կրում: Լեզուական տեսակէտից դժուար է սահման դնել միջին գրականութեան վերջին տարիների և նոր գրականութեան առաջին տարիների միջեւ: Մնում է գրականութեան բովանդակութիւնը և ոգեկանութիւնը: Իսկ այդ կողմից հայոց նոր գրականութեան առաջին սահմանաքարն է հանդիսանում Խաչատուր Աբովեանի Վէրք Հայաստանի վէպը:

Հայ նոր գրականութեան 19-րդ դարի սիրուած և յայտնի բանաստեղծներն են, Ղեւոնդ Ալիշան-ը, Միքայէլ Նալբանդեան-ը, Մկրտիչ Պեշիկթաշլեան-ը, Ռափայէլ Պատկանեան-ը, Պետրոս Դուրեան-ը, Սմբատ Շահազիզ-ը:

Աբովեանից բացի, այդ շրջանի նշանաւոր վիպասաններն են, Ծերենց-ը, Րաֆֆի-ն, Պերճ Պռօշեան-ը, Ղազարոս Աղաեան-ը և Յակոբ Պարոնեան-ը:

Հայ վիպագրութեան մէջ, մինչեւ այսօր էլ, առանձին տեղ է գրաւում մեծատաղանդ Րաֆֆի-ն: Րաֆֆի-ն Աբովեանի անմիջական շարունակողն է, ուրեմն և աւելի մօտ ընթերցողի սրտին և աւելի շատ կարդացուողը: Րաֆֆու Խենթ, Կայծեր, Դաւիթ Բէկ և Սամուէլ վէպերի ազդեցութեան տակ հոգիներ են դաստիարակուել, որ արդէն գրաւական է մի գրողի մեծութեան համար:

Հայ գրականութեան մէջ իր ուրոյն տեղն ունի մեծատաղանդ Յակոբ Պարոնեանը: Սուր միտք: Տեսնել և տեսածը աննման երգիծանքով արտայայտելու կարողութիւնները նրա բոլոր երկերը լայն ժողովրդականացման են հասցրել:

Հայ նոր ընդհանուր գրականութեան երկրորդ շրջանի (19-20-րդ դարերի) բազմաթիւ բանաստեղծներից շատ յայտնիներից են, Յովհաննէս Յովհաննիսեան-ը, Յովհաննէս Թումանեան-ը, Արշակ Չօպանեան-ը, Աւետիք Իսահակեան-ը, Դանիէլ Վարուժան-ը, Միսաք Մեծարենց-ը, Վահան Տէրեան-ը, Սիամանթօ-ն: Այդ բանաստեղծները անմիջական, ընթերցողին հաղորդակից նրա սրտից խօսող ու յուզող գրողներ են և շատ ժողովրդականացած:

Բ. Սովետական Հայաստանի գրականութիւն. Ինչպէս ամբողջ Սովետական Միութեան մէջ, այնպէս էլ Սովետական Հայաստանում գրականութիւնը պրոպականդայի միջոց է հանդիսանում: Գրականութիւնը ստեղծւում է պատուէրով և ծառայում է օրուայ պահանջներին: Մի շարք տաղանդաւոր գրողներ, ինչպիսին են, Եղիշէ Չարենց, Ակսէլ Բակունց, Մկրտիչ Արմէն և ուրիշները մեղադրուելով ազգայնականութեան մէջ գնդակահարուած են կամ քշուած Սիբիր: Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին, երբ պէտք եղաւ ժողովուրդը խանդավառել հայրենասիրութեամբ, հայ դրողներից Ստեփան Զօրեանը գրեց Պապ թագաւոր վէպը, իսկ Դերենիկ Դեմիրճեանը Վարդանանք-ը: Այդ վէպերն էլ մնայուն գործեր են: Բանաստեղծներից մնայուն գործեր տուողներ են, Յովհաննէս Շիրազ, Սիլվա Կապուտիկեան և մի շարք ուրիշները:

Գ. Սփիւռքի հայ գրականութիւն. Սփիւռքի բազմաթիւ հայ գրողները կազմուած են, թուրքական ջարդերից ազատուած սերունդներից, ինչպէս եւ Սովետական Հայաստանից տարագիր եղած գրողներից:

Այդ գրականութեան սկիզբը մօտաւորապէս կարելի է համարել 1921–22 թուերը: Կենտրոններն են հանդիսանում, Սիրիա-ն, Լիբանան-ը, Եգիպտոս-ը, Փարիզ-ը Հարաւային և Հիւսային Ամերիկա-ն:

Սփիւռքի բանաստեղծներից հանրածանօթներն են, Վահան Թէքէեան-ը, Նիկողոս Սարաֆեան-ը, Մ. Իշխան-ը, Անդրանիկ Ծառուկեան-ը, Ս. Թափառական-ը, Արսէն Երկաթ և ուրիշները:

Ե. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայ գրականութեան մշակներից Աւետիք Իսահակեանն ասել է, Մի գրականութիւն մի ժողովուրդ է: Եւ իրապէս հայոց գրականութիւնն ինքն հայ ժողո-

D. Co

1. A and B are preparing for an exam on literature. They quiz each other on names, dates, major works etc.
2. C goes into a bookstore to buy a present for his father-in-law, who is a teacher and a student of lite

վուրդն է դարերի խորքից եկած։ Այն գրականութիւն է, ազատասիրութեան, մարդասիրութեան, եղբայրասիրութեան և ազգերի հաւասարման։ Այն աշխատանքի և լուսաւոր ապագայի հանդէպ ունեցող հաւատքի գրականութիւն է։

Իրականութեան մէջ, այդ գրականութիւնը մի քանի անգամ աւելի մեծ է, մի քանի անգամ աւելի գեղեցիկ է, քան այդ մասին մի որեւէ կերպ ուզուած է ասուած լինել այստեղ։ Այն ճոխ և գունագեղ է։ Կարեւորն, որ իր ազգային գծերով այն ինքնատիպ գրականութիւն է, ինչպէս որ ինքնատիպ է հայկական ճարտարապետութիւնը։ Այդ կողմից էլ, շատ հետաքրական է։

onversation

ature. He and the clerk discuss possible selections.

3. C is talking with his father-in-law, who is planning a special lecture on Armenian literature. C asks him what he is going to talk about, what he is going to emphasize most, etc.

LESSON 29

HISTORY

A. Basic Sentences

Aram

examination	քննություն	kənnutyún
Vahan, when do your exams begin?	Վահան, քո քննությունները ե՞րբ են սկսում:	

Vahan

In about two weeks.	Մոտավորապես երկու շաբաթից:	
I still have lots of time to study.	Դեռևս բավական ժամանակ ունեմ սովորելու:	

Aram

object, subject	առարկայ	ařark'á
history	պատմություն	p'at'mutyún
Of all my subjects history is the one that bothers me most.	Իմ առարկաների մեջ, ինձ ամենաշատ մտահոգողը պատմությունն է:	
even	անգամ	ankám
face, surface	երես	yerés
To tell the truth, I haven't even opened the book.	Ճիշտն ասած, անգամ երեսին չեմ նայել:	

Vahan

to exaggerate	չափազանցնել	čapazancənél

You really like to exaggerate.	Դու էլ իսկապէս սիրում ես չափազանցնել։	
You've been to class, haven't you?	Միթէ դասերին ներկայ չէ՞ս եղել։	
	Aram	
date	թուական	təvak'án
Yes, but the problem is that I don't know why I can't remember the names and dates.	Այո, բայց խնդիրը այն է, որ չգիտեմ ի՞նչու չեմ կարողանում յիշել անուններն ու թուականները։	
	Vahan	
summarized	ամփոփ	ampóp
fashion, way	կերպ	k'érp'
I have a few history books in which all the historical events with their important dates are presented in condensed fashion.	Ինձ մօտ մի քանի պատմութեան գրքեր կան, որոնց մէջ ամփոփ կերպով տրուած են պատմական բոլոր դէպքերը իրենց կարեւոր թուականներով։	
to read	ընթերցել	əntercél
Take these books and read them.	Վերցրու այդ գրքերը եւ ընթերցիր։	
	Aram	
Thanks.	Շնորհակալ եմ։	
king	թագաւոր	takavór
Between you and me, what you call history is in reality the story	Բայց խօսքը մեր մէջ, պատմութիւն ասածդ բանը, իրականի մէջ, թա-	

of the lives of kings, which is something that bores me.	գաւորների կեանքի պատմութիւնն է. Մի բան, որ ինձ ձանձրացնում է:	
such-and-such	այսինչ	aysínč
emperor	կայսր	k'áysr
to take (by conquest)	գրաւել	gəravél
army	բանակ	banák'
victory	յաղթութիւն	haxtutyún
What does it matter to me that such-and-such an emperor took such-and-such a country and some army or other won great victories?	ինձ ի՞նչ, թէ այսինչ կայսրը այսինչ երկիրը գրաւեց, թէ այսինչ բանակը մեծ յաղթութիւններ տարաւ:	

Vahan

civilization	քաղաքակրթութիւն	kaqakak'ərtụtyún
But you forget that all those things are problems relating to our civilization.	Բայց սիրելիս, դու մոռանում ես, որ այդ բոլորը մեր քաղաքակրթութեան վերաբերող խնդիրներ են:	

Aram

song	երգ	yérk
There you go giving me the same old line again.	Նորից նոյն երգը երգեցիր:	
as if	կարծես	k'arc'és
to save	փրկել	pərk'él
evil	չարիք	čarík

As if you and I were going to save the world from evil.	կարծես դու եւ ես պիտի փրկե՛նք աշխարհը չարիքից:	
	Vahan	
to go away from	հեռանալ	heřanál
You're getting off the subject, Aram.	Նիւթից հեռանում ես, Արամ:	
social	ընկերային	ənk'eraín
to be founded	հիմնուել	himnəvél
I only meant that our present social and political life is mainly based on the events of our past.	Ես միայն ուզեցի ասել, որ մեր ներկայ ընկերային ու քաղաքական կեանքը գլխաւորապէս հիմնուած է մեր անցեալի դէպքերի վրայ:	
	Aram	
historian	պատմաբան	p'at'mabán
Say, I never knew you were a regular historian!	Եղբա՛յր, դու կարգին պատմաբան ես եղել:	
to learn, study	սովորել	sovorél
theory	տեսութիւն	t'esutyún
Where did you learn those theories?	Ո՞րտեղից ես սովորել այդ տեսութիւնները:	
But joking aside, when can I have the books?	Բայց կատակը մի կողմ: Ե՞րբ եմ կարող այդ գրքերը ունենալ:	

chapter	գլուխ	gəlúx
There are a few chapters that I want to read in contemporary history.	Մեր ժամանակակից պատմութեան շուրջ մի քանի գլուխներ կան, որ ուզում եմ կարդալ:	
	Aram	
opinion	կարծիք	k’arc’ík
What’s your opinion, Vahan—what are the exam questions going to be about?	Ի՞նչ է կարծիքդ Վահան, ի՞նչ նիւթերի շուրջ պիտի լինեն քննութեան հարցերը:	
	Vahan	
easy	հեշտ	héšt’
It’s hard to say.	Հեշտ չէ ասել:	
probably	հաւանական	havanak’án
Lots of students say that it’s likely that it’ll be about Tigran the Great.	Ուսանողներից շատերը ասում են, թէ հաւանական է Տիգրան Մեծի մասին լինի:	
some (people)	ոմանք	vománk
hand-to-hand battle	ճակատամարտ	č’ak’at’amárt’
Some say that it’s going to be about the Battle of Avarair.	Ոմանք ասում են, թէ Աւարայրի ճակատամարտի մասին է լինելու:	
conviction	համոզում	hamozúm

But the rest are convinced that one of the questions will undoubtedly be on the Treaty of Sèvres.	Իսկ ուրիշները այն համոզման են, թէ անպատճառ հարցերից մէկը Սեւրի Դաշնագիրն է լինելու։	

Aram

to ruin	քանդել	kandél
I'm really in bad shape.	Տունս քանդուեց։	
freedom	ազատում	azat'úm
In a word, I don't have a chance.	Մի խօսքով ազատում չունեմ։	

Vahan

hopeless, desperate	յուսահատական	husahat'ak'án
Oh, your situation isn't that hopeless.	Այնքան էլ յուսահատական չէ դրութիւնդ։	
I know a good way out.	Ես մի լաւ ճամբայ գիտեմ։	

Aram

What is it?	Ո՞րն է։	

Vahan

Go home, forget about eating, drinking, and sleeping, and study continuously.	Գնա տուն, մոռացիր ուտել, խմել ու քնել, եւ շարունակ սովորիր։	

Aram

Socrates	Սոկրատես	sok'ərat'és

death	մահ (gen.
to express	արտայայտե
to clean	մաքրել
If a wise man like Socrates said at the time of his death, "I know only one thing: that I know nothing," then it's all over for people like me.	Եթէ Սոկրատեսի իր մահուան ել է, որ «Ե տեմ, որ ոչի ինձ նմաններ

B.

1. a. I can't remember the dates.
   b. I can't remember the important names and dates of Armenian history.
   c. It is necessary to study an hour each day.
   d. In order to be able to remember the important names and dates of Armenian history, it is necessary to study an hour each day.
   (Հայոց պատմութիւնից կարեւոր անուններ և թուեր յիշելու համար)

2. a. The books that you are to read are on the desk
   b. The books on Armenian history are in this section.
   c. I had to go to a lot of stores.
   d. In order to find the books that I was supposed to

մահուա)	máh (mahvá)
ւ	art'ahayt'él
	makrél

պէս իմաստուն մէկը
ժամանակ արտայայտու–
ս միայն մի բան գի–
նչ չգիտեմ», այլեւս
ի հաշիւը մաքրուած է:

Build-ups

read on Armenian history, I had to go to many stores.
(Հայոց պատմութեան վերաբերող մի ընթերցելիք գրքերը գտնելու համար)

3. a. This book presents the facts of Armenian history in a condensed fashion.
   b. This book is cheap.
   c. This book is quite popular at our university.
   d. Because it presents the facts of Armenian history in a condensed fashion and is cheap, this book is popular at our university.
   (Այս գիրքը Հայոց պատմութեան տուեալները ամփոփ կերպով ներկայացնելու և աժան ծախուելու պատճառով)

4. a. The lecture bored the students.
   b. The lecturer delivered one of his boring lectures.
   c. The lecturer gave a difficult examination.
   d. After delivering one of his lectures which bored all his students, the lecturer gave a hard exam.

   (Բոլոր ուսանողներին ձանձրացնող իր դասախոսութիւններից մէկը տալուց յետոյ)

5. a. The emperor won a series of famous victories.
   b. The emperor won a series of memorable victories with his armies in the Middle East.
   c. The emperor returned to his capital city.
   d. After winning a series of famous victories with his armies in the Middle East, the emperor returned to his capital city.

   (Իր բանակի հետ Միջին Արեւելքում մի շարք յաղթութիւններ տանելուց յետոյ, կայսրը իր)

6. a. Have you read all these chapters?
   b. Have you read all these chapters on contemporary Armenian history?
   c. Your exams will be quite easy.
   d. After reading all those chapters on contemporary Armenian history, your exams will be quite easy.

   (Հայոց պատմութեան շուրջ այդ բոլոր գլուխները կարդալուց յետոյ)

7. a. What is your opinion about these problems?
   b. What is your opinion about contemporary Armenian political problems?
   c. I changed my opinion about it.
   d. As a result of hearing his opinion about contemporary Armenian political problems, I changed my opinion.

   (ժամանակակից հայ քաղաքական խնդիրների շուրջին իր կարծիքը լսելուս հետեւանքով)

8. a. That book will be interesting for you.
   b. That book will be interesting to people like me.
   c. For our teacher, these books are boring.
   d. The books that were interesting for me and people like me were a little boring for our teacher.

   (ինձ եւ ինձ նմանների համար շատ հետաքրքրական գրքերը)

9. a. He studied about the Treaty of Sèvres.
   b. In the course of three years, he had studied about the Treaty of Sèvres.
   c. The historian wrote an excellent paper.
   d. The historian, who for three years had studied about the Treaty of Sèvres and its results, wrote an excellent paper.

   (Սեւրի դաշնագրի և իր հետեւանքների մասին երեք տարի դասախօսութիւն լսած պատմաբանը)

10. a. He wants to study Armenian political and social life.
    b. Armenian political and social life is based on events of the past.
    c. The historian went to the Middle East.
    d. In order to study Armenian political and socia

C

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա. ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Ժողովուրդ

Հայերն արիական ժողովուրդների ցեղախումբի են պատկանում: Հայերէնը հնդեւրոպական (հնդգերմանական) լեզու է:

Հայերն իրենք իրենց հայ են անուանում, իրենց երկիրը, Հայք, կամ Հայաստան: Օտարները հայերին արմէն անունով են կոչում, իսկ երկիրը, Արմէնիա:

Հայ ժողովուրդի ծագման, կազմաւորման և պա մութեան վերաբերեալ, շատ հարուստ գրականութիւն գոյութիւն ունի աշխարհի բոլոր մեծ գրադարաններում, թէ հայերէնով և թէ օտար լեզուներով:

life, which is based on events of the past, the historian went to the Middle East.

(Անցեալի դէպքերի վրայ հիմնուած, հայ ընկերային և քաղաքական կեանքն ուսումնասիրելու համար)

. Reading

Հայ ժողովուրդի պատմութիւնն սկսւում է առաջին հազարամեակում Քրիստոսի ծնունդից առաջ:

2· Հայկազունիք

Հայկական թագաւորական առաջին տունը, Հայկ դիւցազնի անունով կոչւում է Հայկազունեանց:

Հայկազունի թագաւորներից, Տիգրան առաջինը (535–525) և պարսիկ աշխարհակալ Կիրոս առաջինը (536–529) ժամանակակիցներ են եղել և պատանեկան ընկերներ:

3· Արտաշունիք

Հարիւր իննսուն թուին (Ք·ա·) Արտաշէս անունով մի հայ իշխան հիմք է դնում, իր անունով, Արտաշիսեան կոչուող, թագաւորական տանը: Արտաշէս առաջինը (190–161) ստեղծում է ուժեղ բանակ, հաւաքում է հայկական բոլոր հողերը, Հայաստանը դար–

ձնելով միջազգային նշանակութիւն ունեցող ազգային պետութիւն: Արտաշէս առաջինը հետամուտ է լինում նաև հայերէնի տարածմանը և հաստատմանը:

Հռոմէացիներից քաղաքական փախստական և Արտաշէսի մոտ ապաստան գտած հռչակաւոր զորաւար Հանիբալի խորհուրդով Արտաշէս առաջինն Արաքսի ափին, իր անունով, կառուցում է Արտաշատ մայրաքաղաքը, որի աւերակները մինչև այսօր էլ գոյութիւն ունեն:

Արտաշէս առաջինը հայ ժողովուրդի ամենասիրուած թագաւորներից մէկն է: Ժողովուրդը նրա մասին հիւսել է բազմաթիւ առասպելներ և դիւցազնական երգեր: Նրա մահն այնպիսի խոր կսկիծ է պատճառել հայ ժողովուրդին, որ նրա որդին և յաջորդը, Արտաւազդը, հօր գերեզմանի վրայ ասել է տրտնջալով, Հայր դու մեռար և աշխարհը հետդ տարար: Էլ ինչի՞ վրայ ես թագաւորեմ:

Հայաստանը հզօրագոյն պետութիւն դարձաւ Տիգրան երկրորդ Մեծի ժամանակ (90–55):

Տիգրան Մեծի պետութեան սահմանները տարածւում էին, Կովկասեան լեռնաշղթայից մինչև Արաբիա և Պարսկաստանից մինչև Միջերկրական ծովը: Նրան էին ենթարկւում տասից աւելի օտար թագաւորներ, դրա համար էլ նա կոչւում էր Արքայից Արքայ: Նա կառուցել Տիգրանակերտ մայրաքաղաքը, զարդարելով այն զարմանահրաշ պալատներով ուր նրա համար յաճախ թատերական ներկայացումներ էին տեղի ունենում:

Տիգրան Մեծը մի շարք յաջող և անյաջող պատերազմներ ունեցաւ Հռոմի հետ:

Տիգրանից յետոյ, Հայաստանն այլեւս, արեւմուտքից Հռոմի, արեւելքից Պարսկաստանի համար աշխարհակալութեան և ամեն տեսակ քաղաքական դաւադրութիւնների ասպարէզ դարձաւ:

4. Արշակունիք

վաթսունվեց թուից սկսած (Քրիստոսից յետոյ) Հայաստանում հաստատուեց հայ Արշակունիների թագաւորական տունը:

Արշակունեանց տան առաջին թագաւորն էր, Տրդատ առաջինը (66–100), որն իր թագադրութեան առթիւ Հռոմ գնաց և Ներոնի (54–68) հիւրն եղաւ:

Տրդատ երրորդ Արշակունիի թագաւորութեան ժամանակ (287–330) հայերն 301 թուին քրիստոնէութիւնն ընդունեցին, որպէս համազգային կրօն: Ի պատիւ քրիստոնէութիւն տարածող սուրբ Գրիգորի, հայերը նրան Լուսաւորիչ մեծ անուն են տուել, իսկ Հայ Առաքելական Եկեղեցին երբեմն կոչւում է նաեւ Լուսաւորչական, կամ Գրիգորեան:

Քրիստոնէութեան ընդունումով, Հայաստանը քաղաքականապէս և մշակոյթօրէն հեռացաւ հեթանոս Պարսկաստանից, որի հետ հարեւաններ էին և լայն յարաբերութիւնների մէջ էին գտնւում: Սակայն, յետագայում, կրօնակից Բիւզանդիայի հետ էլ չմտերմացաւ, շնորհիւ վերջինիս Հայաստանի վերաբերեալ տարած նուաճողական քաղաքականութեանը:

Չորսհարիւր տասերկու թուին, մի հայ զինուորական, Մեսրոպ Մաշտոց անուն և ազգանունով, հնարեց հայ գրերը, որոնցով հիմա գրուած են այս տողերը:

Հայ այբուբենի գիւտով Հայաստանում հիմք դրուեց ազգային գրաւոր մշակոյթին: Ընդհանրապէս, հինգերորդ դարը հայ գրականութեան ծաղկման ոսկեդար է համարւում:

5. Վարդանանք

Բիւզանդիայի և Պարսկաստանի դէմ, իր անկախութիւնը պահպանելու համար, անվերջ մղուած պայքարներից թուլացած, Հայաստանը հինգերորդ դարում կորցրեց իր անկախութիւնը: Երկիրը բաժանուեց վերոյիշեալ աշխարհակալ կայսրութիւնների միջեւ: Այ ժամանակներում Հայաստանի չորսհինգերորդը գտնւում

ւում էր յատուկ կառավարիչի միջոցով:

Հայ ժողովուրդը միշտ Պարսկաստանի հետ պահելու նկատառումով, պարսկական թագաւոր Յազկերտը (438-475) վճռում է հայերին քրիստոնէութիւնից դարձնել հեթանոսութեան, ինչպիսին էին իրենք պարսիկները:

Երկու տարի (450-451) շարունակ, հայ ժողովուրդը, սպարապետ Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ, մարտնչեց պարսիկների դէմ իր խղճի ազատութիւնը պաշտպանելու համար: Երեսուն տարի յետոյ (481-484) նոյն կրօնական պատերազմը կրկնուեց: Բայց այս անգամ էլ հայերն ուժեղ ընդդիմութիւն ցոյց տուին:

Կրօնական-ազգային այս երկու մեծ պատերազմները Հայոց պատմութեան մէջ յայտնի են Վարդանանք անուան տակ: Վարդանանց պատերազմների ժամանակ ընկած զինուորներին, հայ ժողովուրդն իր ազգային սուրբերի շարքն է դասել և ամէն տարի ոգեկոչում է նրանց.

Վարդանանց պատերազմներից յետոյ, պարսիկները ստիպուած եղան այլեւս կրօնական հարց չբարձրացնել և Հայաստանը ճանաչել, որպէս կիսանկախ պետութիւն հայ կառավարիչով:

6․ Ժողովուրդ և եկեղեցի

Բնականօրէն քրիստոնեայ Բիւզանդիան, քրիստոնեայ հայ ժողովուրդի վերաբերեալ, եթէ ոչ իր սէրն ու եղբայրութիւնը պիտի ցուցաբերէր, այլ գոնէ չէզոք պիտի մնար քաղաքականապէս: Բայց այդպէս չէր: Բիւզանդիան իր ամբողջ պատմութեան ընթացքում միշտ էլ, Հայաստանի և հայ ժողովուրդի հանդէպ վարեց կեղծ, դաւադիր, զզուելիօրէն անհանդուրժելի քաղաքականութիւն: Հայ եկեղեցին, որ միշտ էլ հայ ժողովուրդի հետ է եղել, նրա ցաւերով տառապել, 554 թուին, որպէս քաղաքական բողոք, հանդէպ Հայաստանի Բիւզանդիայի կողմից վարած այդ թշնամական քաղաքականութեանը, վերջնականապէս իր կապերը խզեց բիւզանդական (յոյն) եկեղեցուց:

Բ․ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1․ Արաբական տիրապետութիւնը Հայաստանում

Մահմեդականութիւնը եօթերորդ դարում միացրեց արաբական ցեղերը, որոնք Ասիայի և Աֆրիկայի որոշ մասերը գրաւելով, Սպանիայի վրայով, նոյնիսկ, մինչեւ Ֆրանսիայի դռները հասան: Սակայն մինչ այդ, Արաբները գրաւեցին Պարսկաստանը: Պարսիկները ընդունեցին մահմեդականութիւնը և արաբական

Պարսկաստանից յետոյ, 652 թուին, արաբներն առաջին անգամ Հայաստան մտան և մեծ դժուարութեամբ գրաւելուց յետոյ ստիպուած եղան Հայաստանը ճանաչել, որպէս կիսանկախ պետութիւն: Սակայն արաբների տիրապետութիւնը Հայաստանում միշտ էլ ցնցուեց հայկական ապստամբութիւններով, որոնցից յայտնիներն են, 747–750 և 772–775 թուերինները: Հայ ժողովուրդը բուռն ընդդիմութիւն ցոյց տուեց պահելու համար իր մայրենի լեզուն, մշակոյթն ազգային և քրիստոնէութիւնը:

2. Բագրատունիք

Արաբների դէմ մղուած ազատագրական կռիւների ընթացքին, հայ նախարարական տներից աչքի է ընկրնում Բագրատունի հին տոհմը: Բագրատունի այդ տնից Աշոտ Բագրատունի նախարարը 886 թուին հայոց թագաւոր դարձաւ հիմք դնելով Բագրատունի արքայական հարստութեանը:

Բագրատունիները թագաւորեցին Հայաստանում մինչեւ 1045 թիւը: Նրանց օրօք, Հայաստանը ծաղկեց և շէնացաւ: Բագրատունիների մայրաքաղաք Անի-ն Արեւելքի գոհար անունը ստացաւ շնորհիւ իր շքեղութեանը և հարստութեանը:

3. Կռիւ և դաւաճանութիւն

Տասնմէկերորդ դարի առաջին կէսից, սելջուկ թուրքերը պարսկաստանից ելնելով սկսեցին իրենց կործանարար յարձակումները Հայաստանի վրայ: Առիթից օգտուելով, արեւմուտքից էլ Հայաստան մտան բիւզանդացիները, որոնք կռւի մէջ պարտուելով դիմեցին իրենց աւանդական դաւաճանութեանը: Նրանք Հայոց շատ երիտասարդ թագաւոր Գագիկ երկրորդին (1040–1045) Կ.Պոլիս հրաւիրեցին իբր թէ խաղաղութեան բանակցութիւնների համար, բայց խարդախօրէն բանտարկեցին և յետոյ էլ սպանեցին: Երկիրն առանց առաջնորդի մնալով գրաւուեց բիւզանդացիների և սելջուկների կողմից, ասպատակուեց և աւերուեց: Յոյներից և սելջուկներից յետոյ Հայաստանի վրայով անցան Ջինգիզխանի և Լենկթէմուրի մոնղոլ–թուրքական հորդաները:

4. Կիլիկեան Հայաստան

Մեծ Հայքի անկախութեան կործանումից յետոյ, Բագրատունի տոհմից Ռուբէն անունով մի իշխան Կիլիկիայում հիմք դրեց հայկական մի պետութեան (1080 Թ.), որի թագաւորները Ռուբէնի անունով կոչուեցին Ռուբինեաններ:

Կիլիկեան Հայաստանը իր ծաղկման գագաթնակէ–

տին Հասաւ Լեւոն երկրորդ Թագաւորի օրօք (1187–1219)։ Լեւոն երկրորդը շատ օգնեց եւրոպացի խաչակիրներին, նրանց դէպի Երուսաղէմ կատարած արշաւանքների ժամանակ։

Կիլիկեան Հայաստանը հայ ազատ կեանքի և ազգային մշակոյթի զարգացման մի հանգրուան էր հանդիսանում։ Բայց 1375 թուին նա էլ ընկաւ, ընկրկելով մահմեդական ցեղերի դէմ, իր ինքնապաշտպանութեան համար, մղած անհաւասար ու ահաւոր պայքարի ընթացքին։

Հայոց պատմութեան զարգացման ցաւատանջ ընթացքը հասկանալու համար, պէտք է լաւ իմանալ Հայաստանի աշխարհագրական դիրքը և ճանաչել բնազդներն ու մարդկային բարոյական ըմբռնումներն այն ժողովուրդների, որոնցով շրջապատուած է եղել հայ ժողովուրդը և որոնց հետ նա ուզենալով չուզենալով շփման մէջ է եղել։

Գ· ԱՆԺԱՄԱՆԱԿ ԺԱՄԱՆԱԿ

1· Հայաստանը բաժան-բաժան

Կիլիկեան հայկական պետութեան կործանումից մինչեւ 1918, այսինքը մինչեւ Հայաստանի Հանրապետութեան հաստատումը, հայոց քաղաքական պատմութիւնն անժամանակ բնոյթ է կրում։ Անժամանակ, որովհետեւ այդ երկարատեւ շրջանին հայ ժողովուրդն իր սեփական ազգային պետականութիւնը չունեցաւ: Ճիշտ է հայկական մի քանի լեռնային շրջաններ, բայց բուն Հայաստանը ենթակայ էր օտարներին: Սկզբում երկիրը բաժանուած էր պարսիկների և Թուրքերի միջեւ և ենթակայ նրանց անօրինակ ծանր լուծին: Տասնիններորդ դարի վերջերին, Հայաստանի արեւելեան նահանգները, ուրիշ կերպ ասած կովասեան մասը, գտնւում էր ռուսերի ձեռքին, իսկ արեւմտեան մասը Թուրքերին:

2· Կացութիւնը Թուրքական տիրապետութեան տակ

Այն ժամանակ, երբ հայերը Հայաստանի ռուսական մասում, թէեւ անազատ, բայց գոնէ կեանքի և գոյքի ապահովութիւն ունէին, այդ մասին, նոյնիսկ, Թուրքական տիրապետութեան տակ խօսք չկար:

Հայաստանի Թուրքական մասում, հայը որպէս պարտուած քրիստոնեա (ռաեայ) համարեա օրէնքից դուրս էր յայտարարուել · Այստեղ պետական ծանր տուրքերից բացի, հայ ժողովուրդը ենթակայ էր պետական պաշտօնեաների, մահմեդական ցեղապետների, մոլեռանդ ու վայրենի տարրերի կեղեքմանը:

3· Ազատագրման ճիգեր

Անկախութեան կործանումից յետոյ, հայ ժողովուրդն իր ազատագրման յոյսը կապեց կրօնակից և լուսաւոր Արեւմուտքի հետ: Այդ ուղղութեամբ պարբերաբար մի քանի պատգամաւորութիւններ ուղարկուեցին Հռոմի Պապի և եւրոպական մի քանի կառավարութիւնների մօտ զինուորական օգնութիւն խնդրելու նպատակով: Բայց Եւրոպան համակրանքի զգացումներ արտայայտելուց բացի գործնական միջոցներ ձեռք չառաւ:

Եւրոպական օգնութեան մէջ յուսաբեկ, հայ ժողովուրդը դիմեց մի շարք ապստամբութիւնների թուրք—պարսկական տիրապետութիւններից ազատագրուելու համար: Այդ ապստամբութիւններից յայտնիներն, Սիւնիք-Արցախինը (1722-1728) Դաւիթ Բէկի գլխաւորութեամբ և Երեւանինը 1724 թուին:

Դ. ՆՈՐ ԵՒ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Հայկական հարցը միջազգային խնդիր

Ռուս-թուրքական 1877-1878 թուերի պատերազմից յետոյ, ռուսերից ջախջախուած Թիւրքիան մի շարք զիջումներ էր արել Ռուսաստանին Հայաստանում և Բալկաններում: Բացի դրանից թուրքերը ստորագրել էին բարենորոգումներ մտցնել Հայաստանի իրենց մասում: Ռուսական յաջողութիւններից անհանգիստ Անգլիան 1878 թուին այդպէս կոչուած Բեռլինի վեհաժողովը ուր նա խիստ պաշտպանեց Թիւրքիային ի դիմաց Կիպրոս կղզիի, որը նա Թուրքերից ստացել էր որպէս վարձատրութիւն: Այդ վեհաժողովի 64 յօդուածներից 61-րդը վերաբերւում էր հայերին, որով Թուրքերը խոստանում էին թեթեւացնել հայ ժողովուրդի դառն վիճակը արեւմտեա Հայաստանում: Բեռլինի վեհաժողովի 61-րդ յօդուածով էլ հայկական ցաւերը ստացան հայկական հարց անունը և դարձան միջազգային խնդիր: Թուրքերը երբեք չիրագործեցին այդ յօդուածը, լաւ հասկանալո եւրոպական պետութիւնների հակամարտութիւնները:

2· Երկաթէ շերեփի պատմութիւնը

Բեռլինի վեհաժողովի ժամանակ այնտեղ էր գնացել, հայոց համար մի բան աղերսելու համար նաեւ հայկական մի պատուիրակութիւն հայոց հայրապետ Խրիմեան Հայրիկի գլխաւորութեամբ:

Բեռլինից ձեռնունայն վերադառնալով, հայոց իմաստուն հայրապետը զեկուցել էր իր ժողովուրդին, իր առաքելութեան արդիւնքի մասին.

„—Վեհաժողովում հարիսայ էին բաժանում (Հայկական ազգային կերակուր), բոլոր օտար պատուիրակ-

Ես էլ ուզեցի վերցնել մեր բաժինը, բայց իմ շերեփը թղթէ լինելու պատճառով մնաց կաթսայի մէջ և մենք հարիսայ չստացանք":

Հայոց հայրապետն ուզեցել էր հասկացնել իր ժողովուրդին, որ ազատութիւնը աղերսով (աղերսաթղթով) չի ձեռք բերւում, այլ երկաթով, այսինքն զէնքով:

3. Ազատագրական շարժումն Հայաստանում

Երկաթէ շերեփի պատմութիւնն անկիւնադարձ դարձաւ հայ ազատագրական ձգտումների մէջ: Եւրոպայից յուսախաբ, հայ ժողովուրդը դիմեց իր ինքնապաշտպանութեան սեփական միջոցներին: Նա սկսեց զինուել: Դեռ 1862 թուին հերոսական Զէյթունը զինական ընդդիմութիւն էր ցոյց տուել թուրքերին իր իրաւունքները պաշտպանելու համար և փախուստի մատնել Ազիզ փաշայի 40,000 բանակը:

Զէյթունի դէպքից քսան տարի յետոյ 1882 թուին, ընդդէմ թուրքական տիրապետութեանը, հայկական ժողովրդական շարժումներ տեղի ունեցան Վանի, Մուշի և Կարինի (Էրզերում) նահանգներում, բայց շուտով զսպուեցին: Ի տես ժողովրդական շարժումներին, գրական պայքարը ղեկավարելու համար, բայց շուտով ղանազան պատճառներով լուծուեցին:

4. Հայկական կոտորածները

Ժողովուրդները ստրուկ ապրել չեն կարող: Հայկական ազգային զարթօնքը մարդկային տարրական իրաւունքները պաշտպանելու նպատակ ունէր միայն: Սակայն թուրքերը ճանաչելով Եւրոպան չէին ուզում տեղի տալ հայկական հարցում: Այդպէս 1895 թուին Սասունում ծագած ապստամբութեանը ի պատասխան նրանք ջարդեցին մի քանի հազար անմեղ ժողովուրդ: Մէկ տարի յետոյ, 1896 թուին, Կ.Պոլիսում տեղի ունեցած մի խաղաղ ցոյցի պատճառով թուրքերը ջարդեցին 300,000 անմեղ, անզէն և անպաշտպան կանանց երեխաների, ծերերի և երիտասարդների: Հայաստանը դարձաւ համատարած ողբի երկիր:

5. Հ.Յ.Դաշնակցութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն քաղաքական մեծ կուսակցութիւնը ասպարէզ եկաւ 1890 թուին: Այդ կուսակցութիւնը իր առաջին յայտարարութիւնով ասել է „...Այսօր Եւրոպան իր առաջ է տեսնում մի ամբողջ ժողովուրդ մի ամբողջ ազգ, որ սկսել է պաշտպանել իր մարդկային իրաւունքները...": Հայ ժողովուրդի մարդկային իրաւունքների պաշտպանութեան իրագործումն էլ հանդիսանում էր և մինչեւ հիմա էլ հանդիսանում է այդ կուսակցութեան գործունէութիւնը:

6. Հայկական հարցը և Եւրոպան

Եւրոպայի խիղճը հայ ժողովուրդի կողմն էր: Սակայն եւրոպացի դիւանագէտները հայկական հարցն առեւտուրի միջոց էին դարձրել հիւանդ Թիւրքիայի հետ: „Ջարդեցէք հայերին, բայց դրա համար վճարեցէք մեզ" այդպէս է բնորոշել իր ժամանակին, ֆրանսիացի մեծ գրող Անատոլ Ֆրանսը, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դիւանագէտների կողմից հայ արիւնն առեւտրի միջոց դարձնելը Թուրքերի հետ:

7. Առաջին մեծ պատերազմի նախօրեակին

Առաջին մեծ պատերազմի նախօրեակին (1914) յանկարծ, Անգլիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, հայոց հայրապետի դիմումի վրայ, ելնելով ոչ արդարադատութիւնից, այլ իրենց ապագայի պատերազմական ծրագրերից, Թուրքերին ստիպեցին գործադրել իրենց առաջարկած հայկական բարենորոգումների ծրագիրը: Ըստ այդ ծրագրի Հայաստանի նահանգներից, Կարինը (Էրզերում), Տրապիզոնը, Սեբաստիան, Վանը, Բաղէշը, խարբերդը և Տիգրանակերտը պէտք է կազմէին հայկական երկու մարզեր, կառավարուելով եւրոպացի երկու կուսակալների միջոցով (հոլանդացի Հօֆ և նորվէգացի Վէստէնէնկ): Սակայն արդէն ուշ էր: Դեռ կուսակալները իրենց պաշտօններին չանցած, սկսուեց Առաջին համաշխարհային պատերազմը:

8. Մեծ Եղեռնը

Թուրքերը պատերազմի մէջ մտան ընդդէմ դաշնակիցների և 1915 թուին, համաշխարհային պատմութեան մէջ, գործադրեցին ցեղասպանութեան հրէշային ոճիր: Թուրքերը, նախապէս զինուորագրութեան անուան տակ հաւաքելով զէնքի ընդունակ բոլոր հայ տղամարդկանց, յետոյ ջարդեցին մէկ միլիոնից աւելի հայ կանանց, երեխաների, ծերերի և երիտասարդների, ամայացնելով Հայաստանը:

9. Հայաստանն անկախ

Բոլշեւիկեան յեղաշրջումը (1917 թուի աշնանը) քայքայեց ռուսական ճակատը Արեւմտեան Հայաստանում Թիւրքիայի հետ: Բոլշեւիկները յետ կանչեցին բանակը, բացելով Կովկասի դռները թուրքերի

ծես, պիտի ոչնչացուէր ամբողջովին: Կացութի
անհռելի էր: Մայիսին (1918) արիւնահեղ ճակա
մարտեր տեղի ունեցան Սարդարապատի, Ապարանի
Ղարաքլիսէի մօտերը, հայկական չուտափոյթ կազ
ժողովրդական գնդերի և թուրքական կանոնաւոր
քերի միջեւ: Այդ ճակատամարտերում, թուրքերը
հանդիպեցին հայերի կատաղի դիմադրութեանը և
ստիպուած եղան յետ փախչել: Զինադադար կնքու
Հայ ազգային խորհուրդը նոյն թուի մայիսի 28-
Հայաստանը յայտարարեց անկախ պետութիւն:

10. Հայկական Հանրապետութիւնը

Հայաստանի Հանրապետութեան հաստատումով
իրագործուեց հայ ժողովուրդի դարերի տենչանք
Հայ ժողովուրդը այլեւս ազատ էր և ինքնիշխան
Այսուհետեւ նա պիտի ծաղկեցնէր իր աւերուած
րենիքը և զարգացնէր ազգային մշակոյթը: Սկի
շատ դժուար էր: Հայաստանի կառավարութիւնը
ժառանգութիւն էր ստացել, պատերազմի հետեւան
քայքայուած տնտեսութեամբ և թուրքերի կողմից
աւերուած մի երկիր անկայուն սահմաններով:
Երկիրը լեցուն էր որբերով և գաղթականներով:

օրերին շատ օգնեց հայ ժողովուրդին, ուղարկելով, հաց, դեղօրայք և հագուստեղէն: Ժողովուրդն ու կառավարութիւնն էլ անում էին հնարաւորը կացութիւնը փրկելու համար: Եւ 1920 թուին սովն ու հիւանդութիւններն արդէն վերջացել էին: Բացուել էին դպրոցները: Հաստատուել էր պետական համալսարանը. Աստիճանաբար կարգի էին բերւում քանդուած գիւղերն ու քաղաքները: Հայ զօրքը մաքրում էր հայկական հողերը թուրքական տիրապետութիւնից: Աշխարհի բոլոր ծայրերից հայերն վերադառնում էին և ցանկութիւն էին յայտնում վերադառնալ իրենց սիրելի ազատ հայրենիքը:

11. Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչուած պետութիւն

Սկզբում փաստօրէն, իսկ 1920 թուի յունուարին, իրաւականօրէն Հայաստանի Հանրապետութիւնը ճանաչուել էր, որպէս անկախ պետութիւն: Նոյն 1920 թուի օգոստոսի 10-ին դաշնակիցների, Հայաստանի Հանրապետութեան և Թիւրքիայի կողմից ստորագրուեց Սեւրի դաշնագիրը: Ըստ այդ դաշնագրի, Արեւմտեան Հայաստանից հայկական անվիճելի հողեր էին համարւում հայկական այն նահանգները, որոնց սահմանները գծել էր Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Վիլսոնը: Թուրքերը պէտք է շուտով դատարկէին այդ հողերը: Հայ ժողովուրդը ցնծութեան մէջ էր:

12. Հայաստանը թուրքական սալի և բոլշեւիկեան մուրճի արանքում

Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը լծուած էր իր երկրի վերաշինութեամբ և ծրագրում էր ծաղկող ապագան, թուրքերն ու բոլշեւիկները գաղտնօրէն համաձայնութեան էին գալիս խորտակելու հայկական անկախութիւնը: Յանձինս Հայաստանի Հանրապետութեան, նրանք Արեւմուտքի յառաջապահ գունդն էին տեսնում իրենց սահմանների մօտ, որին երկուսն էլ հաւասարապէս ատում էին: Եւ այդպէս էլ Սեւրի դաշնագրի ստորագրումից մի ամիս չանցած, թուրքերը արեւմուտքից և հարաւից, իսկ բոլշեւիկները հիւսիսից և արեւելքից միաժամանակ յարձակուեցին Հայաստանի վրայ: Հայ ժողովուրդը մէն-մենակ մաքառեց չորս ճակատների վրայ, բայց ընկրկեց: Երկիրը բաժանուեց թուրքերի և բոլշեւիկների միջեւ: Թուրքերն իրենց մասի հայ բնակչութիւնը բնաջնջեցին իսկ երկիրն աւերեցին:

13. Սովետական Հայաստան

Բոլշեւիկները Հայաստանի իրենց մասի հողերի վրայ սովետական կարգեր հաստատեցին և Հայաստանի այդ մասը Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա անուան տակ միացրին սովետական Ռուսաստանին:

14· Հայկական ապստամբութիւնը բոլշեւիկների դէմ

Հայ ժողովուրդի համար, թուրքերը միշտ թուրքեր են, բոլշեւիկները միշտ բոլշեւիկներ: Հաստատուելով Հայաստանում, բոլշեւիկները Ռուսաստան քշեցին հայ զինուորականութիւնը: Բանտերը լեցրին հայ մտաւորականներին, պետական գործիչներին, ազգային գործիչներին: Հայ աշխատաւորութեան ձեռքից խլեցին նրա վերջին կտոր հացը: Սկսել էին ջարդել բանտարկուած մտաւորականութիւնը, երբ 1921 թուի փետրուարի 18-ին ծագեց համաժողովրդական ապստամբութիւնը: Հայ ժողովուրդը Հայաստանից դուրս քշեց համայնավար ասպատակողներին, բայց մի քանի ամսից յետոյ, նրանք յետ եկան նոր ուժերով և վերահաստատեցին իրենց կարգերը:

15· Հայ ժողովրդի այսօրը

Այսօր կայ Սովետական Հայաստան մէկ միլիոն և կէս բնակչութեամբ, որը խօսքով անկախ է, իսկ փաստօրէն Սովետական Ռուսաստանի մի նահանգն է կազմում միայն: Կարգերն այնտեղ բռնակալական են: Հայ ժողովուրդն ինքն իր տէրը չէ: Կայ և Արեւմտեան Հայաստան, որը թուրքերի ձեռքին է և որի մէկ միլիոնից աւելի բնակչութիւնը ցրուած է Մերձաւոր Արեւելքից մինչեւ Հարաւային և Հիւսիսային Ամերիկաները, թուրքական բռնի ու վայրենի ուժի ստիպումով, զրկուած իր դարաւոր հայրենիքից: Մօտ մէկ միլիոն հայեր եւս ապրում են Սովետական Հայաստանից դուրս, բայց Սովետական Միութեան զանազան վայրերում:

D. Conversation

1. A is interested in learning the major facts about American history so that he can pass his exams and become a citizen. He asks B to help him. B answers as many questions as he can, and offers to help A find the answers to the others.

2. Two students at the beginning of a semester are discussing various history courses which are open to them. The discuss the content and the advantages of each. Finally, they decide which one to take.

3. F has recently had a course in Armenian history. G is very interested in the subject. He asks F about the course, and also asks him some specific questions about Armenian history.

LESSON 30

REVIEW

A. Variations

1. a. I've decided to make a trip to the Middle East.
   b. If you've decided to go, you must write to my brother about it.
   c. If you decide to go via Persia, you must write to my brother about it.
   d. If you had gone last month, you could have gone with my brother.

2. a. If I had a visa, I could go to Armenia.
   b. If you get a visa, please tell me about it.
   c. If you had replied in time, you would have received a visa.
   d. If the political situation weren't so bad, you could get a visa.

3. a. Did my lecture bore you?
   b. If I'm boring you, please tell me.
   c. If you were boring me, I'd tell you.
   d. If the first lecture hadn't bored me, I'd have been present at the second.

4. a. The history of our people has been conditioned by the geographical location of our country.
   b. If you want to understand history, you must study geography also.
   c. If history weren't conditioned by geography, I wouldn't be studying geography.
   d. If the geographical location of Armenia had been different, the history of the country would have been different also.

5. a. If you don't understand, I'll explain everything to you.
   b. If you explain everything carefully, I'll understand.
   c. If you had explained your problem, I'd have helped you.
   d. I didn't understand because he didn't explain everything carefully.

B. Modified Basic Sentences

1. The train stopped at the station.
2. I went to the theater without my money.
3. What do these facts mean?
4. I've been waiting for you for ten minutes.

5. How many minutes have you been standing here?
6. Did you go straight to the Middle East?
7. In the near future, I'm going to write an article on Iran.
8. Are you familiar with the Armenian community in Tabriz?
9. Did agriculture play an important rôle in ancient Armenia?
10. From all appearances, this is an excellent geography book.
11. How did it happen that you didn't bring your pen?
12. Is Artashat on this map?
13. Which map is Armenia on? This one.
14. Is it true that the boundaries of Germany have been changed recently?
15. I'd like to ask several questions pertaining to the Middle East.
16. If you decided to go to the semi-mountainous regions, your trip will be more difficult.
17. Don't exaggerate!
18. I haven't even read one book about Armenian history.
19. Don't bore us with all those dates!
20. Please don't sing that song again.
21. He's learned a lot of new theories at the university.
22. Take these clothes. Take them to the laundry.
23. They have all kinds of food in the restaurants on First Avenue.
24. The restaurants located near the theater are better than those located in the commercial section of town.
25. Don't get off the subject!
26. After eating some rice cooked with butter, we asked for some pork.
27. Forget those dates! They're not important!
28. In general, the kinds of drinks popular in the rest of the world are also popular in Armenia.
29. If you want to have your suit cleaned, you'll have to take it to the pressing shop yourself.
30. Please clean your room.
31. Ask him where we can get our shoes fixed.
32. We always take ours to the shoe shop across from the library.
33. How do you like my newly repaired shoes?
34. I don't like houses without separate bathrooms.
35. Have you paid for your car?
36. No, I'm paying thirty dollars a month.
37. Our son has several friends who are just his age.
38. I wish you both success.
39. I can't help saying what a beautiful building this is!
40. If your headache is bothering you again, take this medicine.
41. On account of my headache, I wasn't able to go to school this morning.
42. What is this political situation the result of?
43. This drugstore is as good as that one.
44. We receive the paper daily.
45. I needed six shirts, but I had brought only three.
46. His good health is the result of the fact that he takes care of himself.

47. I'd like this house better if it had more modern conveniences.

48. They argued about who was going to pay for the food.

49. What do they do with the hydroelectric power produced by this river?

50. No matter how much you study, there are still more new words.

C. Fluency Drills

1. Have you studied your geography?
No, I haven't.
Are you going to before the exam?
Yes, I've got to. So far, I haven't cracked a book.

2. How many hours a week do you study for the literature course?
Very little. I find that the lecturer is so good that I don't have to read.
How can that be? Literature is found in books, not in lectures!
Yes, but I read most of the important books last summer.

3. Would you like to go with us to the opera tomorrow night?
I'd like to very much. It's Faust, isn't it?
Yes, do you like it?
I've never heard it, but we're reading Goethe's Faust in our literature course now.

4. What a pleasant trip we had! At first the weather was cloudy, but afterwards the sky became perfectly clear. We went by plane from Rome to Teheran. We saw the Caucasus, its alpine pastures, and its beautiful little villages.

5. Why did you go to Iran?
To examine the oil industry of that country.
How did you find the political situation?
One can't describe it in a few words.

6. What kind of grain is best for these fields?
No matter what kind of grain you plant, it takes a lot of work.
Yes, the more you work, the better the harvest will be.
You can't be sure, though. The weather can ruin everything.

D. Conversation

Go back to the general conversational situations outlined in Lessons 6, 12, and 18. Develop them in your own way, using the Armenian which you have learned since those lessons. Add subject matter as you see fit.

For example, Conversation 1 of Lesson 6 might be supplemented from your lesson on agriculture. Conversation 3 of the same lesson might use material from lessons on transportation, geography, and industry.

ARMENIAN - ENGLISH GLOSSARY

Ա

ազատ	11	free, not busy
ազատագրական	28	emancipation
ազատագրուել	29	to be emancipated
ազատագրում	29	emancipation
ազատասիրութիւն	28	love of freedom
ազատել	28	to free, liberate
ազատում	29	freedom
ազգ	22	nation, people
ազգայնականութիւն	28	nationalism
ազգային	11	national
ազգանուն	29	family name
ազդակ	26	agent, factor
ազդել	28	to influence
ազդեցութիւն	28	influence
Ազրբէջան	25	Azerbaijan
աթոռ	9	chair, seat
աժան	22	cheap
ալիւմինեոմ	26	aluminum
ալիւրաղածութիւն	26	flour products
ալպեան	25	alpine
ածելի	22	razor
ականջ	13	ear
ակնարկ	26	glance, look, survey
ահա	10	here! here is!
ահաւոր	29	terrible, fearful
ահռելի	29	horrible
աղ	25	salt
աղաթթու	26	nitric acid
աղբիւր	21	source, origin; spring
աղերս	29	request, petition
աղերսել	29	to ask
աղմուկ	19	noise
աղուէս	25	fox
աղջիկ, աղջկայ	2	girl
աղօթել	28	to pray
աճել	2[illegible]	to increase
աճում	27	growth
ամայացնել	29	depopulate
ամառ, ամառուայ	5	summer
ամբողջ	25	whole, complete, entire
ամբողջովին	9	completely
ամբողջութիւն	28	completeness
ամէն	4	all, every
ամենահին	4	oldest
ամենամեծ	4	largest, biggest
ամենացածր	25	lowest
Ամերիկայ	3	America
ամերիկացի	3	American (person)
ամիս, ամսուայ	4	month
ամուսին	2	husband
ամուսնացած	2	married
ամպոտ	5	cloudy
ամփոփ	28	summary
այբուբեն	28	letter (of the alphabet)
այգեգործութիւն	15	fruit growing
այգի	3	orchard, vineyard
այդ	1	that (pron.)
այդպէս	4	thus, in that manner
այդպէ՞ս		is that so?
այդտեղ	1	there (that place)
այժմ	2	now

այլ	23	but; other
այլեւս	10	yet, still, any more
այլուրեք	28	elsewhere
այծ	25	goat
այծեամ	25	deer, roe
այնտեղ	1	there (over there)
այնքան	4	so, so much
այնքան...որչափ		as...as
այնքան...որքան		as...as
այո	1	yes
այս	1	this (pron.)
այսինչ	29	such-and-such
այսինքն	26	that is
այսուհետեւ	5	hereafter, from now on
այստեղ	1	here (this place)
այսօր, այսօրուայ	5	today
այցելել	21	to visit
այցելութիւն	3	visit
անասնապահական	27	cattle-raising
անասնապահութիւն	25	animal husbandry
անբաժան	28	inseparable
անբասիր	28	irreproachable
անբաւարար	26	insufficient
անբերրի	25	unfertile, unproductive
անգամ	13	time; even
քանի անգամ		how many times
անգլերէն	3	English (language)
անգրագէտ	28	illiterate
անդրադառնալ	26	to reflect
անդրադարձել	26	to answer, reply
անդրադառնալ	28	to stress, emphasize
Անդրկովկաս	27	Trans-Caucasia
անել, արեցի	2	to do
անզէն	29	unarmed
անզուգական	28	incomparable
անժամանակ	29	inopportune
անիւ	23	wheel, tire
անխուսափելի	25	inevitable, unavoidable
անծանօթ	13	unfamiliar, unknown
անկախ	29	independent
անկախութիւն	25	independence, autonomy
անկայուն	29	unstable
անկիւն	8	corner
անկողին	8	bed
անհամբեր	23	impatiently
անհանգիստ	29	worried, anxious
անհանգստանալ	23	to worry, be anxious
անհանգստացնել	13	to bother, annoy
անհանդուրժելի	29	intolerable
անհաւասար	29	unequal
անհեղինակ	28	unauthoritative
անհոգ	17	careless; carefree, without worry
անձ	19	person
անձամբ	19	personally
անձնական	20	personal
անձրեւ	5	rain
անձրեւային	22	rainy
անմեղ	29	innocent
անմիջական	28	immediate
անմիջապէս	28	immediately
անյաջող	29	unsuccessful
աննախընթաց	26	unprecedented
աննաւարկելի	26	unnavigable
աննման	28	incomparable
աննպաստ	28	unfavorable
անշուշտ	21	undoubtedly, of course
անորոշ	25	indefinite, undefined
անուանել	29	to call, name
անուն	2	name

անուշ	26	sweet, pleasant
անուշեղէն	26	sweets, candy
անչափ	21	boundless
անպայման	14	undoubtedly, certainly
անպատճառ	23	absolutely, definitely
անվերջ	23	endless
անվիճելի	29	indisputable
անտառ	23	forest
անտառապահութիւն	25	forest conservation
անցեալ	10	last, past
անցկացնել	27	to cross
անցնել	23	to pass; to go to
անփոխարինելի	28	irreparable
անօրինակ	29	unexampled
աշխատանք	11	work, labor
աշխատասիրութիւն	26	love of work
աշխատաւորութիւն	29	workmen
աշխատել	15	to try; to work
աշխատութիւն	28	work
աշխարհ	4	world
աշխարհաբար	11	modern, common; modern Armenian language (as opposed to the old classical language)
աշխարհագրական	21	geographical
աշխարհագրապէս	25	geographically
աշխարհագրութիւն	25	geography
աշխարհակալ	29	emperor; ruling
աշխարհակալութիւն	29	conquest, victory
աշխարհիկ	28	wordly, secular
աշուն, աշնան	5	autumn, fall
ապա	8	then
ապագայ	10	future
ապակի	26	glass
ապահով	23	safe, assured
ապահովութիւն	29	security, assurance
ապաստան	29	cover, refuge
ապստամբութիւն	28	revolt
ապրանք	19	merchandise
ապրել	3	to live, dwell
ապրիլ	10	April
աջ	1	right (direction)
առ	25	per
առ հարիւրը		percent
առած	28	maxim, adage
առակ	28	proverb
առայժմ	10	yet, presently
առանձին	9	private, separate
առանձնապէս	27	particularly
առանց	22	without
առաջ	20	before, ago
առաջանալ	26	to proceed, arise
առաջարկել	20	to propose, suggest
առաջին	11	first
առաջնակարգ	26	first-rate, first
առաջնորդ	29	guide, leader
առաջնորդել	25	to lead, guide
առաջնորդութիւն	29	leadership, management
առասպել	28	myth, fable
առաստաղ	19	ceiling
առատ	15	plentiful
առարկայ	26	object, item, subject
առաւօտ	14	morning
առաւօտեան	23	morning (adj.)
առաքելական	25	apostolic
առաքելութիւն	29	mission
առեւտուր	17	business, commerce
առեւտրական	17	trade, business, commercial; merchant
առթիւ	3	for this occasion
առիթ	20	occasion, opportunity

առնել	17	to take, seize; to buy
առնչուել	25	to relate to
առնչութիւն	25	relation
առնչուող	25	relating to
առողջ	21	healthy
առողջանալ, առողջացայ	13	to recover
առողջութիւն	13	health
առջեւ	22	in front of; front
ասել, ասացի	1	to say, tell
ասելիք	19	what there is to say
Ասիայ	29	Asia
ասորի	25	Syrian
ասուել	25	to be said
ասպատակուել	29	to be invaded
ասպատակող	29	invader
ասպարէզ	29	stadium; career
աստիճան	15	percentage, degree
աստիճանաբար	29	by degrees, gradually
Աստուած	17	God
աստուածաբանական	28	theological
Աստուածաշունչ	28	Holy Bible
ասքէթական	28	ascetic
ատամ	22	tooth
ատամնաբոյժ	3	dentist
ատել	29	to hate
արաբ	19	Arab, Arabian
արաբական	29	Arabic
արագ	13	fast, quick
արագահոս	26	swift flowing
արագընթաց	25	swift, rapid
արանքում	29	between
Արարատ	11	Mount Ararat
Արաքս		Araks River
արգելակ	23	brake
արդար	26	just, equitable
արդարադատութիւն	28	uprightness
արդեօք	5	introduces a question: is it true that...?
արդէն	15	already
արդի	11	modern
արդիական	14	modern
արդիւնաբեր	28	productive
արդիւնաբերային	26	productive
արդիւնաբերութիւն	26	production
արդիւնաւոր	28	fruitful, useful
արդիւնք	26	product, production
արեւ	5	sun
արեւելեան	19	eastern, Oriental
արեւելք	4	east, Orient
արեւմուտք	4	west
արեւմտեան	25	western
արեւոտ	5	sunny
արժել	1	to cost, be worth
արժէքաւոր	21	valuable
արիական	29	Aryan, Indo-European
արիւն	29	blood
արիւնահեղ	29	bloody
արծաթ	25	silver
արծուային	25	eagle-like
արկած	23	accident
արհեստ	19	trade, craft
արհեստական	26	artificial, synthetic
արհեստաւոր	3	artisan, skilled worker
արձակուրդ	22	vacation, holiday
արձան	11	statue
արձանագրութիւն	28	inscription
արճիճ		lead
Արմենական	25	Armenian
արշաւանք	25	expedition, invasion
արուեստ	28	art

արջ	25	bear
արտ	27	field
արտադրականութիւն	26	production
արտադրանք	27	production
արտադրել	27	to produce
արտադրողական	26	producing
արտադրուել	26	to be produced
արտադրութիւն	26	production, product
արտահանել	19	to export
արտահանուել	26	to be exported
արտայայտել	28	to express, declare
Արտաշատցի	4	native of Artashat
արտասահման	25	outside the boundaries
արտաքին	16	foreign, external
արքայ	29	king
արքայական	29	royal, regal
արօտավայր	27	pasture
արօտատեղի	25	pasture land
աւազան	26	tub, basin
Դոնեցի Աւազան		Don Basin, Donbas
աւան	25	town, village
աւանդական	29	traditional
աւանդութիւն	27	tradition
աւարտական	22	graduating
աւելանալ	26	to increase
աւելի	4	more
աւերակ	29	ruins
աւերուել	29	to be destroyed, ravaged
ափ	25	shore, bank
ափսոս	28	alas!
Աֆրիկայ	29	Africa

Բ

բադ	25	duck
բազէ	25	hawk
բազմազան	27	varied
բազմաթիւ	11	numerous, all sorts of
բաժակ	7	glass, cup
բաժանել	25	to divide
բաժանմունք	19	section
բաժանուել	25	to be divided
բաժին	16	section
բալէտ	11	ballet
բաղկանալ	28	to consist of
բաղնիք	9	bathhouse
բաճկոն	22	coat
բամբակ	25	cotton
բայց	3	but
բան	13	thing
բանակ	29	army
բանակցութիւն	29	conference
բանահիւսութիւն	28	poetry
բանասէր	28	philologist
բանաստեղծ	28	poet
բանաստեղծական	28	poetical
բանջարեղէն	7	vegetable
բանտ	29	prison
բանտարկել	29	to imprison, detain
բառ	27	word, term
բասալտ	26	basalt
բարբառ	28	language, dialect
բարբառային	28	dialectal
բարգաւաճում	26	prosperity
բարդ	26	complicated
բարեբախտաբար	20	fortunately
բարեխառն	5	mild, moderate
բարեկամ	2	friend
բարենորոգում	29	reform
բարեւ	1	salute, salutation, greeting; hello!
բարի	1	good, fine
բարձր	15	high

բարձրահասակ	25 tall
բարձրանալ, բարձրացայ	11 to go up, mount, rise
բարձրացնել	29 to raise
բարձրաւանդակ	25 height
բարձրորակ	26 high quality
բարձրություն	23 height
բարձրունք	11 heights
բարոյական	29 moral
բաց	15 open
բացակայ	21 absent
բացատրել	22 to explain
բացել	17 to open
բացի	19 besides
բաւական	5 enough, a lot, quite
բենզին	23 gas
բերել, բերեցի	14 to bring
բերում	25 inclination
բերրի	25 fertile
բերք	15 harvest
բերքառատ	25 arable
բժիշկ	13 doctor
Բիւզանդիայ	Byzantium
բլուր	23 hill
բնադավառ	26 field
բնագիր	28 original, text
բնազդ	29 inclination, impulse
բնական	25 natural, physical
բնականորեն	29 naturally
բնակարան	9 private house
բնակել	21 to dwell
բնակչություն	25 population
բնաջնջել	29 to exterminate
բնույթ	27 character, nature
բոլշեւիկ	29 Bolshevik
բոլոր	7 all
բոլորովին	5 completely, entirely
բողոք	29 appeal, claim
բովանդակություն	28 contents
բորշ	7 borsch
բորենի	25 hyena
բուն	28 nest; origin
բուռն	29 violent, vigorous
բուսական	25 vegetable, plant
բուսականություն	27 vegetation
բուրդ	27 wool
բռնակալ	28 tyrant, despot
բռնել, բռնեցի	14 to catch, hold, take
բռնի	29 by all means, forcibly
բրինձ	1 rice

Գ

գագաթ	27 summit, peak
գագաթնակետ	29 zenith
գալ, գալիս, եկայ	2 to come, arrive
գահավիժում	28 precipice
գաղափար	21 idea
գաղթական	29 emigrant
գաղութ	25 community, colony
գաղտնորեն	29 secretly
գայլ	25 wolf
գարեջուր	1 beer
գարի	27 barley
գարուն, գարնան	5 spring
գացող	14 next, coming
գդալ	23 spoon
գեղարուեստական	28 of fine arts
գեղեցիկ	4 pretty, beautiful
գեղեցկություն	11 beauty
գետ	11 river

գետեզերք	27	river bank
գետնախնձոր	1	potato
գերեզման	29	tomb, grave
գերմաներէն	21	German (language)
գիծ	26	line
գին	27	price, value, worth
գինի	1	wine
գիշեր	1	night
գիտական	26	scientific
գիտնալ	7	to know
